ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՁԵՌՆԱՐԿ

ԲԱԶՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

www.idem-institute.org

fnfsc.fnst.org

FNFSC

ՊԱՆԴԵԼ ՊԱՆ

ՈՒԼՐԻԿԵ ՖԻՇԵՐ-ԲՈՒՏՄԱԼՈՈՒԻ
ՀԱՄԱՂԵԿԻՆԱԿՈՒԹՅԱՄԲ ԵՎ ՎԱՐԴՈՒՀԻ
ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ԲԱԶՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

ՖՐԻԴՐԻԽ ՆԱՈՒՄԱՆԻ «ՀԱՆՈՒՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Friedrich Naumann STIFTUNG FÜR DIE FREIHEIT

Freiheit.org
fnfsc.fnst.org

ISBN 978-9941-27-680-4

© Friedrich Naumann Stiftung für die Freiheit

ՑԱՆԿ

Ներածություն 11

Մարդու իրավունքներն ու տարբերակվածությունը, որպես տեղեկատվական ռեպորտաժի թեմա..... 15

Ի՞նչ է տարբերակվածություն 19

Ի՞նչ է կարծրատիպ 21

Հասարակական բազմազանության մասին ռեպորտաժի հետ կապված ընդհանուր խորհուրդներ 25

Տեղեկատվության հայթայթում և աշխատանք աղբյուրների հետ 33

Տարբեր խմբերի ներկայացուցիչների հետ հարցազրույց վարելու հետ կապված խորհուրդներ 39

Մանրակրկիտ ռեպորտաժի և թարմ լուրերի վերլուծություն..... 43

Էթնիկ փոքրամասնությունների թեմայով պատրաստած ռեպորտաժների հետ կապված հանձնարարականներ 48

Տարեց մարդկանց թեմայով պատրաստած ռեպորտաժների հետ կապված հանձնարարականներ..... 55

Ընդհանուր հանձնարարականներ լրատվամիջոցներին՝ հասարակության շրջանում բազմազանությունը զարգացնելու նպատակով..... 58

Այն անհրաժեշտ հարցերի ցուցակը, որոնք պարտադիր պիտի հիշի լրագրողը հասարակական բազմազանության թեմայով ռեպորտաժ պատրաստելիս..... 60

Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամը աշխարհի 60-ից ավելի երկրներում պաշտպանում է ազատական այն արժեքները, ինչպիսիք են՝ մարդու իրավունքները, բաց հասարակությունը, կրթությունը, սոցիալական շուկայական էկոնոմիկան, պատասխանատվությունը և անհատական ազատությունը:

Այս գործունեության շրջանակներում 2016 թվականին Ֆրիդրիխ Նաումանը Գերմանիայի արտաքին գործերի նախարարության աջակցությամբ ժողովրդավարական, լրատվամիջոցների և մշակութային հաղորդակցության ինստիտուտի և տեղական գործընկերների հետ համագործակցությամբ մեկնարկեց երեքամյա կրթական ծրագիր՝ Հարավային Կովկասի երկրների լրագրողների համար:

Տասնհինգ հոգուց բաղկացած երեք խմբերում Հայաստանից, Ադրբեջանից և Վրաստանից ժամանած տարբեր տարիքի և մասնագիտական փորձ ունեցող լրագրողներ մասնակցեցին բարձրորակ դասընթացների և ստացան գործնական փորձ՝ էկոնոմիկայի, մշակութային արժեքների և հակամարտությունների թեմաների շուրջ օբյեկտիվ լրագրողական գործունեության վերաբերյալ:

Այս կրթական ծրագրի նպատակն է նպաստել անաչառ ժուռնալիստիկայի զարգացմանը և կապեր հաստատել տարածաշրջանային լրատվամիջոցների ներկայացուցիչների միջև:

Հարավկովկասյան տարածաշրջանի լրագրողների և միջազգային ու տեղական փորձագետների այս տեսական ու գործնական համագործակցության արդյունքում, պատրաստվեց երեք ձեռնարկ՝ օբյեկտիվ ժուռնալիստիկայի թեմայով, երեք կոնկրետ ոլորտում՝ էկոնոմիկա, մշակութային արժեքներ և հակամարտություններ:

Պետեր-Անդրեաս Բոխման

Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամ

Հարավային Կովկասի նախագծի ղեկավար

Հեղինակի մասին

Դոկտոր Պանդել Պանը արդեն 25 տարի աշխատում է որպես լրագրող, խորհրդատու և դասընթացներ վարում: Նա լրագրողների համար պատրաստել և անցկացրել է մի շարք վերապատրաստման դասընթացներ՝ Ուկրաինայում, Բալկաններում, ԱՊՀ և Կենտրոնական Ասիայի երկրներում: Որպես խորհրդատու նա մեծ մասամբ զբաղվում է պետական ռադիոհեռարձակումը հանրային ռադիոյի փոխակերպելու (Արևելյան Եվրոպա, Ուկրաինա) և սակրեբուլոների ռադիո (Community Radios) ստեղծելու (Հարավ-արևելյան Եվրոպա, Մյանմա) պրոբլեմատիկայով: Հրավիրված ուսուցչի կարգավիճակում գործունեություն է վարել Բեռլինի Ազատ համալսարանում, Բոննի և Յենայի համալսարաններում, ինչպես նաև Տիրանայի համալսարանում, Կիրիլի և Մեթոդիոսի անվան համալսարաններում (Բուլղարիա) և Իվանե Ջավախիշվիլիի անվան Թբիլիսիի պետական համալսարանում:

Համահեղինակի մասին

Դոկտոր Ուլրիկե Ֆիշեր – Բուտմալոյուն լրագրող է, դասընթացների վարող և դոցենտ: Բեռլինի Ազատ համալսաարանում լրագրողների միջազգային կոլեգիայում ղեկավարում էր վերապատրաստման դասընթացներ, որտեղ մասնակցում էին լրագրողներ Եվրոպայի բոլոր երկրներից, ԱՊՀ-ից և ԱՄՆ-ից: Դասընթացներ և դասախոսություն-սեմինարներ անցկացնելու նպատակով հրավիրված էր Եգիպտոս, Պաղեստին, Գանա, Կամբոջա, Կենտրոնական Ասիա, Բալկաններ և Կովկասյան երկրներ: Անցկացնում էր մեդիա մշակույթի (Media Literacy), քաղաքական հաղորդակցության, լրագրողական պրակտիկայի դասընթացներ: Նրա դոկտորական աշխատանքի թեման է՝ Ռուսական լրատվամիջոցները ճգնաժամային իրավիճակներում:

Ազատ և անկախ լրատվամիջոցները կարևոր դեր են կատարում երկրում ժողովրդավարական մշակույթը պահպանելու գործում: Նպաստում են հասարակական կարծիքի ձևավորմանը, և այդպիսով ծառայում կենտրոնական հանրային խնդրի կարգավորմանը: Լրագրողներին առանձնահատուկ արտոնություններ և հետազոտության հնարավորություններ է տրվում այս գործառույթը ըստ արժանվույն կատարելու համար: Միաժամանակ այս հանգամանքը լուրջ պատասխանատվության է ենթարկում նրանց լսարանի և, ընդհանրապես հանրության առաջ: Դա պատասխանատվություն է ոչ միայն ռեպորտաժի ընթացքում զգուշություն ցուցաբերելու առումով, երբ գործը հատկապես նուրբ թեմաներին է վերաբերում, օրինակ, հակամարտության կամ կապիտալի, շուկաների և ֆինանսական ապրանքների մասին տեղեկատվությունը, այլ նաև այն անհրաժեշտության, որ լրագրողները պարբերաբար շարունակեն բարձարացնել իրենց մասնագիտական որակը:

Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում սովորական լրագրողական կրթությունը ուղղված է դեպի ընդհանուր ուղղություն ունեցող այն լրագրողների դաստիարակում, ովքեր գրում են «ամեն ինչի» մասին: Մասնագիտական վերապատրաստման լայն սպեկտրը տարբեր թեմաների շուրջ գրելու հնարավորություն է տալիս, սակայն քանի որ նրանց կրթությունը, նախևառաջ, օրվա ակտուալ թեմաները մշակելու և խորության փոխարեն, ընդլայնելու վրա է հաշվարկված, այդ պատճառով էլ նրանց մասնագիտական շրջանակները սահմանում է հենց իրենց ընդհանուր կրթությունը, իսկ նոր թեմաներ ուսումնասիրելու և գիտելիքները խորացնելու համար ժամանակ չի մնում: Նույն խնդրի առջև են կանգնում նաև հակամարտությունների, ճգնաժամերի և աղետների մասին ռեպորտաժ պատրաստելու ժամանակ:

Ֆինանսների և բիզնեսի մասին ռեպորտաժի, հասարակության մեջ «տարբերակվածության»/«բազմազանությանն» (“Diversity”) ուղղված, ինչպես նաև հակամարտությունների նկատմամբ ժուռնալիստիկայի նուրբ թեմաներով անցկացված դասընթացներով Ֆրիդրիխ Նաումանի «Հանուն ազատության» հիմնադրամը արձագանքում է, ոչ միայն Հարավկովկասյան երկրներում այդ թեմաների հետ կապված ստեղծված պահանջարկի, այլ նաև ընդհանրապես աշխարհում լրագրողների հանդեպ պահանջների աճին, քանի որ լրագրողներից օրըստօրե ավելի շատ պրոֆեսիոնալ և սոցիալական հմտություններ են պահանջվում:

Ինչպե՞ս պետք է գրեն ֆինանսական թեմաների շուրջ լրագրողները, որպեսզի իրենց ռեպորտաժը լինի հետաքրքիր, աշխույժ և ընթերցողի համար հասկանալի: Ինչպե՞ս հայթայթեն տեղեկատվություն ֆինանսական և բիզնես կազմակերպությունների մասին: Ինչպե՞ս պահպանեն օբյեկտիվություն ճգնաժամերի, հակամարտությունների և պատերազմների մասին գրելիս: Ի՞նչ չափորոշիչներով է չափվում լրագրողական որակավորումը ճգնաժամային իրավիճակներում: Որքանո՞վ մեծ ազդեցություն են գործում կարծրատիպերը և նախապաշարմունքները տվյալ երկրի լրատվամիջոցների վրա: Ինչպիսի՞ն պետք է լինի խտրականություն չպարունակող ռեպորտաժը՝ ահա այն որոշ հարցերն ու թեմաները որոնք քննարկվել են վորքշոփերի ընթացքում: Տեսական գիտելիքները լրացվեցին գործնական լրագրողական աշխատանքով: Վորքշոփի շրջանակներում մասնակիցները բաժանվեցին երեք խմբի և աշխատեցին համատեղ ծրագրի շուրջ՝ վարեցին հարցազրույցներ և հարցումներ, ստացած տեղեկատվությունը խորացրեցին և առանձնացրեցին շեշտադրումները: Այնուհետև տեղի ունեցավ պատրաստած ծրագրերի ընդհանուր քննարկում և մասնակիցներին տրվեց իրենց աշխատանքները ներկայացնելու, իսկ առաջին հերթին, լրագրողական էթիկայի հիմնախնդիրները քննարկելու հնարավորություն:

Միջազգային խմբերում աշխատելիս մասնակիցներին հնարավորություն տրվեց քննարկել խաչվող թեմաներ և ընդլայնել մա-

սնագիտական արեալը, սրա հետ մեկտեղ ամրապնդել այնպիսի կապեր, որոնք կօգնեն հետագա աշխատանքում: Լրացուցիչ իրավասությունների զարգացմամբ վորքշոփերի մասնակիցներին տրվում է նոր պրոֆիլներ ձեռք բերելու հնարավորություն, ինչը նրանց համար նաև սեփական շուկայական գնի բարձրացման միջոց է: Մասնակիցների հետաքրքրությունները, աշխույժ բանավեճերը, որոնք անցկացվել են վորքշոփերի ընթացքում և դրանից հետո, ինչպես նաև համատեղ ծրագրերը ակներև են դարձնում, թե որքան կարևոր են վերապատրաստման նմանատիպ միջոցառումները լրագրողական պրոֆեսիոնալիզմը բարձրացնելու համար:

Եվ վերջում, այն ինչ ոչ պակաս կարևոր է. Միմյանց հանդիպելու, իրար լավ ճանաչելու և համատեղ աշխատանքի հնարավորությունը, տարբեր ազգերի ներկայացուցիչ լրագրողներին ազատեց բազմաթիվ նախապաշարմունքներից և կարծրատիպերից: Բոլոր մասնակիցները հուսով են, որ ապագայում իրենց ռեպորտաժներով կկարողանան ոչ միայն ավելի լավ տեղեկացնել իրենց լսարանին, այլ նաև կնպաստեն մարդկանց միջև փախըմբռնմանը:

Պանդել Պան
Նոյեմբեր, 2017

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հաճախ խոսում ենք եվրոպական արժեքների նշանակության մասին: Եվ որքան ավելի է ընդլայնվում Եվրամիությունը, այնքան ավելի կարևոր է դառնում, որպեսզի այնտեղ ապրողները գիտակցեն, որ իրենց միությունը հիմնված է ընդհանուր արժեքների վրա: Սակայն ի՞նչ են իրենից ներկայացնում եվրոպական արժեքները:

Մարդկային արժանիք, ազատություն, ժողովրդավարություն, հավասարություն, մարդու, այդ թվում նաև փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության և հարգանքի կանոններ՝ ահա այս արժեքներն են ներկայացված Եվրամիության դրույթներում:

Եվրոպական արժեքների մասին խոսելիս լրագրողների մեծ մասը ենթադրում է մարդու իրավունքները, իսկ մարդու իրավունքները սերտորեն կապված են իրավունքի, բարոյականության, քաղաքական փիլիսոփայության հարցերի, դրանց հետ կապված հիմնախնդիրների և այդ խնդիրները լուծելու ուղիների հետ:

Ժուռնալիստիկան, որպես երկսայրի թուր

Ժուռնալիստիկան և մարդու իրավունքները հատվում են բազում կետերում: Մի կողմից, ժուռնալիստիկան կարող ենք քննարկել, որպես մարդու՝ տեղեկատվություն ստանալու և կիսելու իրավունք, իսկ մյուս կողմից՝ մարդու իրավունքների պաշտպանությունն ու խթանումը հնարավոր չէ առանց լրատվամիջոցների և ժուռնալիստիկայի: ԶԼՄ-ները՝ ռադիոն, հեռուստատեսությունը, լրագիր-ամսագրերը և համացանցը գլխավոր և որոշիչ դեր են կատարում մարդու իրավունքների հիմնախնդիրները լուսաբանելու և լուծելու գործում: ԶԼՄ-ները էական տեղ են գրավում նաև հասարակության տարբեր հատվածները միմյանց կապելու և նրանց միջև փոխըմբռնումը բարելավելու գործում: Այսպես թե այնպես, ժուռնալիստիկան երկսայրի թուր է: Մի կողմից, ժուռնալիստիկան աշխատում է իրական փաստերի հետ, այսինքն այն ինչ տեղի է ունեցել կոնկրետ ժամանակ, կոնկրետ տեղում, սակայն այն (խմբագրական նամակներ, Opposite editorial (առաջատար հոդվածներին հակառակ հոդված լրագրի կամ ամսագրի առաջին էջում) և սյունակներ) ապահովում է նաև հասարակական կարծիքի ձևավորումը և այդ տեսանկյունից նրա գործառույթը շատ ավելի ընդարձակ է քան հասարակ ռեպորտաժինը: Սա նշանակում է, որ թեև լրագրողները մեծ մասամբ հանդես են գալիս իրադարձությունների դիտորդների դերում, սակայն հաճախ կարող են դառնալ նաև (սեփական կարծիքն ունեցող, ուժեղ) մասնակիցներ:

Երկաթե վարագույրի անկումից հետո մարդկության ճգնաժամերն ու բազում արյունալի առճակատումները զոհաբերեցին ոչ միայն մարդկային կյանքն ու վաղուց կառուցած հասարակական կարգն ու կանոնը, այլ ակնհայտ դարձրեցին նաև այն, որ արթնացնելով անցյալի ուրվականներին, բորբոքելով վախն և նախապաշարմունքները, սրելով էթնիկ հակամարտությունները, որքան մեծ ավանդ կարող են ներդնել լրատվամիջոցները հասարակական խմբերի միջև տարաձայնություն և պառակտում ստեղծելու գործում: Այսպիսով, եթե լրատվամիջոցներն ու ժուռնալիստիկան միջմշակութային փոխըմբռնման համար անհրա-

ժեշտ տեղեկատվություն տրամադրելու փոխարեն, վերածվեն ստի, ատելության և անհանդուրժողականության աղբյուրի, ապա դրանք պետք է համարենք մարդու իրավունքները ոտնահարելու գործիքներ:

Նախապաշարմունքներ և այլ «իզմեր»

Մարդկանց մեծամասնությունը իրենցից տարբերվող էթնիկ խմբերի թե ռասաների ներկայացուցիչների հանդեպ դրսևորում է նախապաշարումներ[1], ատելություն և անհանդուրժողականություն: Թեպետ, ռասիզմից բացի գոյություն ունեն շատ այլ «իզմեր», օրինակ, սեքսիզմ, կլասիզմ[2], հակասեմիտիզմ, էյջիզմ[3], էյբլիզմ[4] և անընդունելիության այլ ձևեր, որոնք ուղղված են այն, այսպես կոչված, «ուրիշների» կամ «աուտսայդերների» դեմ, ում չենք դասում մեր սոցիալական կամ էթնիկական խմբի մեջ:

Նախապաշարմունք կամ նախատրամադրությունը հաճախ տանում են դեպի խտրականություն: Այսպես օրինակ, մարդիկ կարող են խտրականության զոհ դառնալ իրենց էթնիկ պատկանելության,

---

1 նախապաշարում ասելով այստեղ նկատի ունենք բացասական կարծիքը կամ տրամադրվածությունը, որը ձևավորվել է նախապես, անմտածված, առանց իմացության կամ որևէ պատճառի: Ցանկացած նախապես ձևավորված դրական թե բացասական կարծիքը կամ զգացումը, իռացիոնալ կարծիքները, զգացմունքները կամ տրամադրությունները, մեծ մասամբ թշնամական բնույթ են կրում:

2 կլասիզմը ենթադրում է նախապես ստեղծված տրամադրություն-վերաբերմունք այն անձանցից ստեղծված խմբի նկատմամբ, որոնց միավորում են «նմանատիպ սոցիալական դիրքը և սահմանված տնտեսական, քաղաքական թե մշակութային առանձնահատկությունները»:

3 էյջիզմը ենթադրում է նախապաշարմունք կամ խտրականություն, որն ուղղված է այս կամ այն տարիքային կատեգորիայի՝ հատկապես տարեց անձանց հանդեպ

4 Էյբլիզմը ենթադրում է խտրականություն այն անձանց նկատմամբ, որոնք ունեն ֆիզիկական կամ մտավոր արատ

ծագման, ռասայի, կրոնի, տարիքի, սահմանափակ կարողությունների, քաղաքական համոզմունքների, սեռի կամ գենդերի, սեռական կողմնորոշման, լեզվի, մշակույթի և այլ նշանների պատճառով:

Այս գործնական ձեռնարկը ստեղծված է գործող լրագրողների համար և կօգնի նրանց «տարբերվող» խմբերի և սոցիալական բազմազանության մասին հասարակությանը արդար և կոռեկտ տեղեկատվություն տրամադրելու գործում, ինչպես նաև կխորացնի հավատն առ այն, որ խոսքն ու արատահայտությունը առանձնահատուկ ազդեցություն են գործում հասարակության վրա: Այն կնպաստի չնկնել վիրավորող բառապաշարի և ոչ ադեկվատ էմոցիաների ծուղակը:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՊԵՍ ՏԵՂԵԿԱՏՎՈՒ-ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՌԵՊՈՐՏԱԺԻ ԹԵՄԱ

Եվրոպան դիմափոխվում է և լրագրողների վերաբերմունքը այդ փոփոխությունների հանդեպ, այնպես ինչպես հասարակական բազմազանության զարգացումը, այսօր դարձել է կարևորագույն հարցերից մեկը: Այսօրվա դրությամբ, լրագրողները մարդու իրավունքների պաշտպանության արեալը ընդլայնում են նրանով, որ հասարակությանը ծանոթացնում են նոր խմբերի հետ և մարդկանց շրջանում տարբերակվածությունների նկատմամբ հարգանք են արմատավորում, լինի դա էթնիկ, կրոնական, սեռական կողմնորոշման հետ կապված թե այլ որևէ նշանով տարբերակվածություն: Չնայած նրան, որ այս ուղությամբ մեծ առաջընթաց է նկատվում, այնուամենայնիվ, այսօր ևս առանց որևէ ջանքերի հնարավոր է հայտնաբերել էթնիկ կարծրատիպերի թե նախապաշարմունքների, վիրավորող բառապաշարի կամ փաստերի միակողմանի լուսաբանման օրինակներ: Ցավոք, լրատվամիջոցները այսօր ևս որոշակիորեն համամիտ են այն կարծիքի հետ, որ բազմազանությունը վատ երևույթ է, որ այս կամ այն փոքրամասնությունները ընկալվում են որպես վտանգ ազգի համար և արժանի չեն մյուսների նման հավասար իրավունքների և վերաբերմունքի: Իրականում ամեն ինչ միանգամայն հակառակն է՝ կրոնի, գենդերի, սոցիալական կարգավիճակի, տարիքի, ֆիզիկական թե մտավոր կարողությունների սահմանափակության, սեռական կողմնորոշման վրա հիմնված խտրականությունը և անհանդուրժողականությունը վտանգ են սպառնում երկրի և տարածաշրջանի կայունությանը և պարարտ հող ստեղծում ծայրահեղականություն սերմանողների համար:

Ամենամեծ մարտահրավերը, որի դիմաց լրագրողները կանգնած են աշխատանքի պրոցեսում, այն մարդկանց մասին գրելն է, որոնք հիմնովին տարբերվում են իրենցից: Երբ տեղեկատվությունը վերաբերում է տարբերվող էթնոսի, հավատքի, սեռական կողմնորոշման, սոցիալական թե տնտեսական խավի ներկայացու-

ցիչներին, լրագրողի պարտականությունն է մանրակրկիտ ներկայացնել այդ անձի տեսակետը, գաղափարները կամ աշխարհայացությունը, նույնիսկ եթե տարբերությունը չափից ավելի մեծ է:

Ընթերցողների/հեռուստադիտողների/ունկնդիրների մեծամասնությունը սոցիալական փոքրամասնությունների մասին շատ վատ է տեղեկացված, նրանցից միայն մի փոքր մասն է անմիջականորեն շփվում տարբերվող էթնիկ, կրոնական թե սեռական կողմնորոշման խմբերի ներկայացուցիչների հետ: Նման դեպքում լսարանը ամբողջությամբ կախված է այն տեղեկատվությունից, որը տրամադրում են լրատվամիջոցները: Դա իհարկե չի նշանակում, որ լրատվամիջոցները թելադրում են, թե ինչպես դատենք՝ մարդիկ նրանց հաղորդագրությունները միշտ չէ, որ ընդունում են: Սակայն նրանց պարտականությունն է ստեղծել օրակարգ և հասարակության ուշադրությունը սևեռել կարևոր պահերի վրա, ինչը նպաստում է վեճերի և թյուրիմացության հավանականության նվազմանը: Այս տեսանկյունից ժուռնալիստիկային կարևոր դեր է հատկացված էթնիկ, կրոնական թե սեռական փոքրամասնությունների վերաբերյալ կարծրատիպերը կոտրելու և ապատեղակատվությունը կանխելու գործում: Դրան նա պետք է հասնի պրոֆեսիոնալ կերպով հաղորդելով տեղեկատվություն և արտահայտելով իրավասու կարծիք, ինչով ունկնդրողին, ընթերցեղին թե հեռուստադիտողին կտա տրված հարցի վերաբերյալ սեփական կարծիք ձևավորելու և լրացուցիչ տեղեկատվություն ձեռք բերելու հնարավորություն:

Ճշմարտությունը լուսաբանել ստույգ, արդար, անկեղծ և կարեկցանքով՝ ահա թե ինչին է հատկացվում որոշիչ նշանակություն հասարակական բազմազանության, փոքրամասնությունների խմբերի և մարդու իրավունքների պաշտպանության խթանման գործում, ինչպես նաև նախապաշարմունքների և արմատական քաղաքական քննարկումների հետ պայքարում: Անկեղծ ասած, գոյություն չունի լիովին միատարր հասարակություն և բնավ, առանց այս փաստն ընդունելու և տարբերակվածությունները հարգելու հնարավոր չէ ընթանալ դեպի ժողովրդավարություն: Այսպիսով, լրատվամիջոցների

միջոցով հասարակության բոլոր անդամների հիմնախնդիրներն ու պահանջները լուսաբանելը և յուրաքանչյուրի միտքը հնչեցնելը ոչ թե միայն արդարության և մեծահոգության արտացոլում է նշանակում, այլ նաև քաղաքացիության բոլոր առավելությունների և պատասխանատվությունների շնորհում յուրաքաչյուր անձին:

Բազմազանության լուսաբանումը հասարակության շրջանում տեղի ունեցած իրադարձություններով չի սահմանափակվում: Գլոբալացումը և աշխարհի տարբեր երկրների քաղաքացիների հարաբերությունների ընդլայնումը բազմազանության լուսաբանմանը նոր, լիովին առանձնահատուկ նշանակություն տվեցին: Հնարավոր է մի երկրում տեղի ունեցած իրադարձությունները լուրջ ազդեցություն գործեն մեկ այլ երկրի կամ ազգի վրա: Այսպիսով, ամբողջովին հնարավոր է որ մի երկրի հիմնախնդիրը, հիմնախնդրի վերածվի նաև հարևան երկրում կամ տարածաշրջանում:

Առաջընթաց տարբերակվածության ճանապարհով

Հասարակության շրջանում, բազմազանությանը աջակցություն ցուցաբերելով, մենք խորացնում ենք ռասայական կամ ազգային ծագման, սեռի, սեռական կողմնորոշման և այն մյուս գործոնների վրա հիմնված տարբերակվածությունների նկատմամբ հարգանքը, որոնք մարդկանց տարբերակում են միմյանցից: Մարդկանց մեջ տարբերվող հայացքների և կարծիքների հանդեպ վախ և բացասական տրամադրություն արմատավորելու փոխարեն, պետք է ցույց տանք, որ այն հասարակության մեջ ուր նրանք ապրում և գործում են գոյություն ունեն բազմազան հետաքրքրություններ, արժեքներ, ֆիզիկական և հուզական բնութագրիչներ:

Բազմազանության աջակցությունն և հարգանքը խտրականությունը կանխելու և բոլորին նույնատիպ կարողություններ շնորհելու հնարավորություն է տալիս:

Ի՞նչ նշաններով է բնութագրվում հասարակության մեջ բազմազանության աջակցությունն ու զարգացումը:

- *Դրա միջոցով մարդիկ գիտակցում են ճշմարտությունը, որ մեզանից յուրաքանչյուրը մյուսներից շատ բանով է տարբերվում:*
- *Այն նպաստում է բազմազանության արդյունքներին:*
- *Այն առաջարկում, կամ իրականացնում է մոտեցումներ, որոնք այդ հարցերը համապատասխանեցնում են ներկայիս իրավիճակին և ընդհանրապես ամբողջ հասարակությանը*

Տարբերակվածությունը այնպիսի արժեք է, որը առանձնահատուկ ուշադրություն է պահանջում, նախևառաջ, լրատվամիջոցների կողմից: Անհրաժեշտ է գիտակցել, որ որակյալ ժուռնալիստիկան հնարավոր չէ պատկերացնել առանց դրա: Երկկողմանի փոխըմբռնմանը հասնելու համար չափազանց կարևոր է պատրաստել կոռեկտ, ճշգրիտ, որակյալ ռեպորտաժ: Եթե ժողովրդավարական հասարակությունից ակնկալում ենք մարդկանց միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատում, ապա լրատվամիջոցների գլխավոր առաքելությունը և պատասխանատվությունը հասարակության տարբերվող խմբերի վերաբերյալ օբյեկտիվ և անկեղծ տեղեկատվություն տարածելն է:

ԻՆՉ Է ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾՈՒԹՅՈՒՆ:

Տարբերակվածությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ մեծամասնությունից այս կամ այն նշանով զատում: Հասարակության մեջ մարդիկ միմյանցից տարբերվում են բազմաթիվ առումներով և գոյություն ունեն մի շարք մշակութային խմբեր: Հնարավոր է, այս խմբերից յուրաքանչյուր միավորի բազում այնպիսի բնութագրիչներ, որոնք տարբերում են նրան մնացած հասարակությունից: Դրանց թվում է՝ մշակույթը, կրոնը, էթնոսը, լեզուն, ազգությունը, սեռական կողմնորոշումը, դասակարգը, գենդերը, տարիքը, սահմանափակ կարողությունները, առողջականը, քաղաքական հայացքները, աշխարհագրական դիրքը, նյութական կարգավիճակը, աշխատանքի փորձը և այլն:

Մեզանից շատերը, որպես տարօրինակ սովորություն պահպանել են այն կարծիքը, որ իբր բոլոր նրանք, ովքեր համամիտ չեն մեր նորմերին՝ սխալ են: Այդ պատճառով էլ հասարակական բազմազանությանը հարկավոր է ցուցաբերել հատուկ ուշադրություն, նախևառաջ, լրատվամիջոցների կողմից, քանի որ դա այն արժեքն է, որը ժողովրդավարական հասարակությունից առանձնահատուկ աջակցություն և զարգացում է պահանջում:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային բազմազանության համաշխարհային հռչակագրի 3-րդ պարբերությունում կարդում ենք ՝ «մշակութային բազմազանությունը ընդլայնում է յուրաքանչյուր անձի համար մատչելի հնարավորությունների ոլորտը, դա առաջընթացի նախա-պայմաններից մեկն է, սրա հետ մեկտեղ առաջընթացը ենթադրում ենք ոչ միայն տնտեսական աճի տեսանկյունից, այլ նաև կյանքի ինտելեկտուալ, հուզական, բարոյական և հոգևոր ոլորտների բարելավման տեսանկյունից ևս:

Բազմազանությունը հաճախ նույնացնում են ինկլյուզիայի (ներառում) հետ, սակայն այս երկու հասկացությունների միջև գոյություն ունի փոքր տարբերություն՝ ինկլյուզիա նշանակում է, որ բոլորը կարող են մասնակցել հասարակական գործընթացներին,

իսկ բազմազանության դեպքում՝ յուրաքանչյուրը կարող է մասնակցություն ցուցաբերել իր սեփական պայմաններով: Այս տեսանկյունից լրատվամիջոցներին գլխավոր դեր և պատասխանատվություն է հատկացվում տարբերվող խմբերը օբյեկտիվ և ազնվորեն ներկայացնելու գործում:

ԻՆՉ Է ԿԱՐԾՐԱՏԻՊ:

Երկար տարիներ առաջ, լրագրող Ուոլտեր Լիպմենը գրում էր, որ հասարակական զգացմունքները, հայացքները և գործողությունները «մեր ուղեղում ծագած պատկերների» արդյունքն է և ոչ թե մեր շրջակայքում գոյություն ունեցող աշխարհին տրված պատասխանը: Իսկապես, մեզանից շատերը կարծրատիպերի պատճառով աշխարհին չափազանց կարճատեսորեն են նայում: Կարծրատիպերը որոշակի խմբերի նկատմամբ մեր նախնական տրամադրվածության հիման վրա ստեղծված զգացմունքներն ու հայացքներն են: Գիտնականները պնդում են, որ կարծրատիպը և՛ այս կամ այն խմբի մասին կտրական դատողությունն արդարացնելու, և՛ միևնույն ժամանակ ընկալումն ու մտածելակերպը պարզեցնելու միջոց է:

Կարծրատիպի գոյության համար ի հայտ է գալիս խմբի անդամների՝ («մենք») և օտարների՝ («մյուսների») տարբերությունը: Որպես կանոն, «մյուսներին» համարում են սեփականից ավելի հոմոգեն խումբ և իրենց խմբի հետ համեմատ բացասական հատկություններ են վերագրում: Մշակութային կարծրատիպերի շրջանակներում «մյուսը», որպես օրենք «մեր հետ» և «մեր» մշակույթի նկատմամբ բացասաբար է բնութագրվում, այն դեպքում, երբ «մեր» մշակույթը «նորմալ», «ճիշտ», «բնական» է համարվում, ըստ որում հավատում ենք, որ նրա ծես-սովորույթներն ու էթիկական նորմերը գործում են ամբողջ աշխարհում:

Այս կամ այն երկրի իմիջը հաճախ ենթակա է նման անձնավորման. Հնարավոր է երկիրը համարենք թշնամական, բարեկամական, հյուրընկալ, ջերմ կամ սառը, այնպես կարծես խոսքը գնում է կենդանի էակի մասին, որն ունի զգացմունքներ և ընկալման ունակություն:

Որպես օրինակ, ադրբեջանական լրատվամիջոցներում հաճախ գործածվող կարծրատիպերի համաձայն, Հայաստանն ընկալվում է

որպես թշնամական երկիր, իսկ հայը՝ թշնամի:[1] Այս իրավիճակը հայկական լրատվամիջոցներում «հայելանման» տարբերակ ունի՝ «Ադրբեջանը Հայաստանի արյունարբու թշնամին է, իսկ ադրբեջանցիները հայերի հավիտենական թշնամիները»:[2] Մյուս կողմից հայկական լրատվամիջոցները հաճախ դիմում են այն կարծրատիպին, որի համաձայն ադրբեջանցիները որոշակի էթնիկ ծագման վայրենիներ, բարբարոսներ, անպարկեշտ, ագրեսիվ և արնախում ժողովուրդ են:[3] Նման կարծրատիպ ադրբեջանական լրատվամիջոցներում գոյություն չունի, թեպետ այստեղ հաճախ լինում են դեպքեր, երբ լուսաբանվում է Հայաստանի դաժանությունը, կեղծիքը, նրանց կողմից ադրբեջանական մշակութային ժառանգությունը ոչնչացնելու փաստերը:

---

1 օրինակ՝ «Գլխավոր մրցավարը հայտարարեց, որ շուտով կներկայացնեն այն մարզիկներին, որոնք ռինգում կմրցեն 54 կգ և 60 կգ քաշային կարգերում և ընգծեց նաև այն, որ հայ մարզիկների կողմից նրանց վտանգ չի սպառնում. «Հայաստանը մեր երկիր է ուղարկում ուժեղագույն բռնցքամարտիկներ: Ինչպես օրինակ՝ Նարեկ Աբգարյանը, որը մրցում է 50 կգ քաշային կարգում, Եվրոպայի չեմպիոն է: Մյուսներն էլ տարբեր մրցույթների մրցանակակիրներ են, սակայն չնայած դրան մենք կարող ենք պարտության մատնել թշնամաբար տրամադրված երկրի մարզիկներին»: (http://epfarmenia.am/wp-content/uploads/2014/06/glossary_eng-1.pdf)

2 «Ադրբեջանը հայկական կողմին միայն որպես օպոնենտ չի ընդունում. Նա արյունարբու թշնամի է, որն իր առաջնային նպատակն է համարում ողջ հայ ժողովրդի բնաջնջումը» (http://epfarmenia.am/wp-content/uploads/2014/06/glossary_eng-1.pdf)

3 օրինակներ՝ «Ադրբեջանցիների ագրեսիվությունը հասել է 21-րդ դարի գագաթնակետին, նրանք դաժան հանցանքներ են գործում և չեն խնայում նույնիսկ իրենց ընտանիքի անդամներին»: «Ցանկացած ադրբեջանցու թիկունքում դեռևս ակնհայտորեն երևում են արյունախում կովկասցի թաթարների դեմքերը»: (http://epfarmenia.am/wp-content/uploads/2014/06/glossary_eng-1.pdf)

Ադրբեջանական լրատվամիջոցների կարծրատիպերից մեկն է նաև այն, որ իբր հայերի մոտ արմատացած է քաղաքական տեռորի ավանդույթը:[1] Այս կարծրատիպը մեծ մասամբ ակնարկում է 1999 թվականի հոկտեմբերի 27-ին ահաբեկիչների կողմից Հայաստանի խորհրդարանի վրա իրականացրած հարձակման և հայ ազգայնական խմբերի կողմից թուրք դիվանագետների և քաղաքական գործիչների նկատմամբ իրագործած ճնշումը: Հայ ժողովրդի նման բնութագիրը ակներև է դարձնում նրան վիրավորելու և վարկաբեկելու ցանկությունը: Բնականաբար դա առաջ է բերում բացասական պատասխան: Այսպես, օրինակ հայկական լրատվամիջոցներում գերիշխում է հետևյալ կարծրատիպը՝ «Ադրբեջանը ահաբեկիչ պետություն է, քրեական երկիր է, որը աջակցում է համաշխարհային ահաբեկչությանը»:

Կոլեկտիվ ինքնության մասին պատկերացումը անվանում են իմիջ: Այս հասկացությունն ընդգրկում է կոլեկտիվի առանձին անդամների, այդ թվում փոքրամասնությունների, կամ որևէ տարածաշրջանի թե ազգության ներկայացուցիչների հավանական բնութագիրը: Պարզորեն ասած, կարծրատիպային իմիջը այն բնութագիրն է, որը փաթաթում են այս կամ այն խմբի վզին նրա ռասայական, ազգային, սեռական կամ այլ տեսակի պատկանելությունից ելնելով:

Հնարավոր է այսպիսի իմիջը պայմանավորված լինի այս կամ այն ֆիզիկական հատկությամբ՝ մաշկի գույնով, դիմագծերով, մազերի գույնով ու վարսահարդարմամբ, կամ վարքագծի տիպիկ ձևերով,

---

[1] Եթե հաշվի առնենք հայերի կողմից արմատացած քաղաքական տեռորի ավանդույթը, ապա նման փորձը հնարավոր է ունենա ողորմելի արդյունքներ և Սերժ Սարգսյանը, որը 1998 թվականի «անարյուն հեղաշրջման» ժամանակ, երբ տեղի ունեցան բազմաթիվ քաղաքական սպանություններ, ղեկավարում էր Հայաստանի գաղտնի ծառայությունը, այդ մասին բոլորից լավ գիտի: Թեպետ նա հասկանում է նաև, որ Թուրքիային բացեիբաց մեղադրելը, Երևանի համար չափազանց վտանգավոր է»: (http://epfarmenia.am/wp-content/uploads/2014/06/glossary_eng-1.pdf)

ըստ որում այդ հատկությունները վերագրում են տվյալ խմբի բոլոր անդամներին: Այս բնութագրումները հասարակական խմբերի պարզեցված և ընդհանրացված ձև են ստեղծում, ուր բավականին մեծ դեր են կատարում լրատվամիջոցները:

Այնուամենայնիվ, կարծրատիպերի գոյությունը լրատվամիջոցներում բացասական երևույթ ինքնին չի ներկայացնում, սակայն պետք է նախատեսել, թե ինչպես է տեղի ունենում այդ կարծրատիպերի դրսևորումը և վերահսկումը տարբեր արտահայտություններում, ինչ արժեքներ և գաղափարներ են արտահայտվում դրանց հետ միասին, ինչպիսին է կարծրատիպերի կոնտենտը, գործառույթն ու նշանակությունը, քանի որ կարծրատիպերը հաճախ առաջ են բերում փոքրամասնությունների խմբերի մարգինալացում, սեգրեգացիա և խտրականություն:

Ցանկացած նախապաշարմունքի հիմք են հանդիսանում կարծրատիպերը և կարծրատիպերի վրա հիմնված ընդհանրացումները փոքրամասնությունների խմբերի նկատմամբ կարող են առաջացնել ատելություն և բռնության ակտեր:

Այսպիսով, երբ լրատվամիջոցները չեն գիտակցում կարծրատիպերի հավանական արդյունքները, նրանք կարող է դառնալ դրանց խորացման, նախապաշարմունք և ատելություն արտահայտող բառապաշարը տարածող գործիքներ: Նախապաշարմունքը արմատական ռասիզմի, հոմոֆոբիայի, թերարժեքության և գերազանցության բարդույթների գրավականն է: Միացյալ Նահանգների Պենի պետական քոլեջի հաղորդակցության ոլորտի պրոֆեսոր Ջոն Սանչեսը գտնում է, որ նախապաշարմունքը նման է ուռուցքի՝ «Նախապաշարմունքը զոհի մոտ պաշտպանության պատրանք է ստեղծում և մարդու վրա ազդում է ուռուցքի նման»: Մյուս կողմից, կոռեկտ և որակյալ ռեպորտաժի և տարբերվող խմբերը հասարակությանը ծանոթացնելու միջոցով լրատվամիջոցները կարող են պայքարել նաև միտումների դեմ: Բացի դրանից, լրատվամիջոցները մեծ դեր են խաղում հասարակության մեջ կարծիքների արտահայտչաձևը փոխելու գործում:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՌԵՊՈՐՏԱԺԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Բառերի նշանակությունը

Ըստ վրացական ասացվածքի `«լեզուն չունի ոսկոր, սակայն կարող է ոսկորներ փշրել», իսկ նման հայկական ասացվածքը հնչում է հետևյալ կերպ`«Լեզվով խոցածը սրով խոցածից խորն է»: Այդ է պատճառը, որ կարծիք արտահայտելիս զգուշություն է հարկավոր: Բառերը մեծ զորություն ունեն, նրանք կարող են և՛ ցավ պատճառել[1] և՛ դարման լինել: Անփութորեն ասված որոշ բառերով կամ արտահայտություններով կարող ենք վիրավորել նրանց, ում դեմ դրանք ուղղված են, ինչպես նաև խոսքերը կարող են ապակողմնորոշել հասարակական կարծիքը, խորացնել էթնիկ և սոցիալական հակամարտությունները, խառնաշփոթ ստեղծել հասարակության մեջ, այն դեպքում եթե նույնիսկ դա չի հանդիսացել մեր նպատակը: Այսպիսով, զգուշությունն այս տեսանկյունից չի նշանակում միայն քաղաքական կոռեկտություն: Այդ պատճառով էլ հարկավոր է բերել հավասարակշռված փաստարկներ և խուսափել այնպիսի բառերից, որոնք պարունակում են դրական կամ բացասական խտրականություն: Պրոֆեսիոնալ ռեպորտաժի շրջանակներում գործածվում են **չեզոք տերմիններ**, որոնք չեն վիրավորում ոչ մեկի զգացմունքները:

♦ Անհրաժեշտ է իմանալ, թե ինչ տերմին նախընտրել այս կան այմ խմբի անդամներին հիշատակելիս այն լեզվով, որով

---

[1] Վրաստանի անվտանգության խորհրդի նախկին ղեկավարի ինքնասպանությունը, վարկածներից մեկի համաձայն, որոշ չափով պայմանավորված էր լրատվամիջոցների կողմից նրա դեմ սկսած քարոզարշավով, որի շրջանակներում նրան մեղադրում էին համասեռականության մեջ : տես `Quinn,S.,Forced out: LGBT peaplein Georgia-a report on ILGA-Europe/COC fact-finding mission, August 2007

պատրաստում ենք ռեպորտաժը: Օրինակ, Վրաստանում, Պանկիսիի կիրճում բնակվող չեչենական էթնոսը իրենց «վաեպիիս» է կոչում, իսկ վրացիները նրանց որպես «քիստիներ» են հիշատակում: Եթե որևէ խումբ դեմ է այս կամ այն բառով իր խմբի անդամներին հիշատակելուն, ապա պետք է հետազոտել բառի ծագումը: Ի՞նչ զուգակցություն և մտքեր են ծագում այն գործածելիս: Ինչո՞ւ է այն առաջացնում դժգոհություն մարդկանց շրջանում: Ինչո՞ւ են մյուս խմբի անդամները շարունակում գործածել այն: Ահա մի քանի օրինակ բանավեճի համար՝ Ադրբեջանում հայ նշանակող բառը (erməni) վիրավորանք է համարվում, черножо́пый, черножопый, կամ chernaia zhopa կովկասյան ժողովուրդներ՝ չեչեններ, ադրբեջանցիներ, վրացիներ և հայեր նշանակող տերմինն է Ռուսաստանում և «սև հետույք» է նշանակում:

♦ Երբեմն քաղաքագետները կամ հոգևորականները վիրավորող տերմիններ են կիրառում փոքրամասնությունների ներկայացուցիչների նկատմամբ, թեև դա չի նշանակում որ լրագրողը նման բառերը և խոսելաձևը պետք է դարձնի իր ռեպորտաժների և հոդվածների ոճ: Երբեմն հարկավոր է անել նրանց խոսքերի պերիֆրազ (շրջասություն): Սակայն եթե որոշում կայացնենք մեջբերել նրանց խոսքերը ճշգրտությամբ, հարկավոր է նշել, որ տվյալ խմբի անդամները նման բառերը վիրավորական են համարում: Բերենք օրինակներ թե ինչպես են գործածում համասեռականների դեմ ուղղված վիրավորական բառապաշարը ոչ միայն ռեսպոնդենտները (այս դեպքում վրացի սոցիոլոգ Անզոր Գաբիանին), այլ նաև լրագրողները, ըստ որում գործածելով այն հենց հոդվածի վերնագրում՝*«Ինչպե՞ս են համասեռականները իրենց թակարդը գցում անփորձ տղաներին»*[1]

Ներածական պարագրաֆում կարդում ենք՝ *«Այն բանից հետո, երբ վրաց քաղաքագետները բռնեցին արևմուտքի ճանապարհը, մեր երկրում խիստ աճեց համասեռականների թվաքանակը: Լեսբիներն ու «գոմիկները» /ռուսական սլենգում՝ համասեռականներ նշանակող*

[1] «Կվիրիս քրոնիկա», (№ 31 (345), 2008:

վիրավորող բառ/ Թբիլիսիում բացեցին իրենց սեփական ակումբը, և պատկերացրեք, մտադրվեցին անցկացնել նաև զեյ-շքերթ: Ասում են նաև, որ նրանց մեծամասնությունը կառավարական պաշտոնյաներ են և փորձում են գայթակղել օֆիսում աշխատանք փնտրող երիտասարդներին»:

Հարցազրույթի հարցին սոցիոլոգը պատասխանում է հետևյալ կերպ՝*«Մեր երկրի եվրոպականացման շրջանակներում, նույնիսկ այնպիսի ավանդական հասարակության մեջ, ինչպիսին վրացականն է, համասեռականությունը գնալով ավելի է արմատանում, և ինչն ավելի կարևոր է, գնալով ավելի լայն արեալ է գրաղեցնում: Ցավոք, այս գործընթացին ներգրավված են բազմաթիվ երիտասարդներ և պատանիներ, որոնք դեռ չեն փորձել կնոջ համը - ոմանք այս թակարդը խաբեությամբ են ընկնում, ոմանք էլ բռնի ուժով: **Համասեռականները, մաֆիայի նման, ունեն իրենց կլանը**, որը տարածվում է աշխարհով մեկ և որի անդամները միմյանց աջակցում են ամեն ինչում: Դա չափից ավելի վտանգավոր է:»*:

♦ Խուսափենք «դիվային» ածականներից, ինչպիսիք են՝ չար, դաժան, կոպիտ կամ բարբարոս: Դրա փոխարեն, պետք է տարածենք ճշգրիտ տեղեկատվություն այս կամ այն խմբի անդամի այն անպատշաճ վարքի մասին, որը մեզ հայտնի է դարձել, ըստ որում առավելագույնս վավերականորեն հաղորդելով այդ արարքների հետ կապված մյուս անձանց արտահայտությունները: Նմանատիպ «դիվային» և ծայրահեղորեն կոպիտ օրինակ է *«ԼԳԲՏ-Կաշիա»* արտահայտությունը, որը գործածել է «Ասավալ-Դասավալի» թերթի լրագրողը, կապված այն բանի հետ, որ Վրաստանի ֆուտբոլի ազգային թիմի կապիտան Գուրամ Կաշիան հոկտեմբերի 15-ին Նիդերլանդներում տեղի ունեցած ֆուտբոլային մատչին, ուր նա մասնակցում էր իր պրոֆեսիոնալ թիմի՝ «Վիտես Արհեմի» կազմում, ԼԳԲՏ-ի իրավունքներին աջակցելու նպատակով թևակապին ծիածանի խորհրդանիշ էր փակցրել. *«ԼԳԲՏ-Կաշիային պետք է վտարել Վրաստանի թիմից»*:[1]

---

[1] «Ասավալ-Դասավալի» թերթ, 2017 թվականի հոկտեմբերի 19:

♦ Պետք է զգույշ լինենք հետևյալ արտահայտությունները գործածելիս՝

♦ «Ինչպես հայտնի է բոլորին...», «Համընդհանուր հայտնի փաստ է, որ...», կամ «Ինքնըստինքյան ակնհայտ է, որ...»: Որպես օրենք, այս ձևով քաղաքական գործիչները սկսում են իրենց սեփական կամ իրենց սոցիալական խմբի միտումնային կարծիքները և շատ հաճախ այն ինչ «բոլորին հայտնի է» կեղծ է, հիմնված է սնահավատության վրա և չի համապատասխանում իրատեսական իրադրությանը: Սա ևս մեկ քաղվածք է Անզոր Գաբիանիի վերոնշյալ մեջբերված հարցազրույցից. *«Բոլորին հայտնի փաստ է, որ «մամաթմավալները» (վրաց խոսակց. լեզվով համասեռական տղամարդ) փնտրում են այնպիսի աշխատատեղեր, ուր շատ տղաներ կան, օրինակ, դպրոցներում և մանկապարտեզներում, քանի որ երիտասարդներին ավելի հեշտ է գցել ծուղակը»: «Բոլորին հայտնի փաստ է...»* ընդհանրացնող արտահայտությունից բացի, Գաբիանին կիրառում է նաև *«մամաթմավալներ»* բառը, որը վրաց խոսակցական լեզվով «հոմոսեքսուալ » է նշանակում և ըստ փորձագետների, այս երևույթին տալիս է քրեական կոնոտացիա (հարանշանակություն):

♦ Վիճարկելի թեմաների շուրջ զրուցելիս խուսափենք ընդհանրացումներից. Գործածենք «ոմանք» բառը «բոլորի» փոխարեն և «հաճախ» բառը «միշտ» բառի փոխարեն:

♦ Կիրառենք ստույգ, միանշանակ արտահայտություններ: Երկիմաստ արտահայտությունները թյուրիմացություն են առաջացնում և հաճախ անվստահության նախապայման են դառնում գրածի նկատմամբ:

Մեր բանականության մեջ ստեղծված պատկերները

Լրագրողի գործի ամենաբարդ պահերից մեկը մտքի ձևակերպումն է առանց միտումնավորության: Միտումնավորություն ասելով ենթադրում ենք որոշակի թեման կամ տեսանկյունը առաջնային դարձնելը: Լրագրողի առջև թեմաների մեծ բազմազանություն է, որոնց մասին գուցե հարկ լինի գրել: Որոշ թեմաների մասին հավանաբար է ոչ էլ լսել ենք երբեք, իսկ մյուսները անմիջականորեն կապված են մեր կամ մեր մտերիմների հետ: Գրել անաչառությամբ բավականին դժվար է, քանի որ եթե այս կամ այն թեման մեզ անձամբ է անհանգստացնում, բնականաբար կփորձենք, դրա մասին գրել այնպես, որ ընթերցողին կամ ունկնդրողին համոզենք մեր հայացքների իսկության մեջ: Սակայն դա լրագրողի պարտականությունը չէ: Լրագրողի պարտքն է մարդկանց հաղորդել ճշմարիտ փաստեր:

Նյութեր հավաքելիս պետք է փորձենք գիտակցել բոլոր այն անաչառությունները, կարծրատիպերն ու նախնական տրամադրությունը, որը կարող ենք ունենալ տվյալ թեմայի հետ կապված: Ինչպես արդեն ասացինք, բնական է, որ ցանկացած թեմայի հետ կապված ունենանք մեր սեփական կարծիքը, սակայն ժուռնալիստիկայի առաքելությունը, ի դեպ, նաև այն է, որ ուսումնասիրենք մեր սեփական և մեր հասարակության նախապաշարմունքները և պարզենք դրանք առաջացնող պատճառները: Թեև, կարծրատիպերի մեծ մասը կարող է հիմնվել ամբողջապես պատրանքային ինֆորմացիայի կամ տեսակետերի վրա, հետազոտողները հաստատել են, որ դրանցից մի քանիսը ռացիոնալ հատիկներ են պարունակում, իսկ մյուսները լիովին ճիշտ են: Սրա հետ մեկտեղ, չնայած նրան, որ կարծրատիպերը հնարավոր է մեծ մասամբ անվնաս լինեն, դրանք ընդունակ են առաջացնել նախապաշարմունք, որը մարդկանց խմբային պատկանելության վրա հիմնված թշնամական կամ բացասական տրամադրություն է ենթադրում: Այդ պատճարով էլ՝

♦ Երբեք չի կարելի նույնականացնել մարդկանց ըստ իրենց կրոնի կամ սոցիալական խմբի

Մարդկանց միշտ պետք է ներկայացնել, որպես անհատներ և ոչ թե այս կամ այն կրոնական թե էթնիկական խմբի, կամ սեռական փոքրամասնության ներկայացուցիչներ: Նշել մարդու հավատքը, էթնիկ ծագումը, կրթության մակարդակը, տարիքը, սեռական կամ քաղաքական կողմնորոշումը կարելի է միայն այն դեպքում, եթե դա կապված է անմիջապես այն այուժեի հետ, որը պատմում ենք լսարանին և միայն այն դեպքում, երբ դա, մեր կարծիքով, անհրաժեշտ է այս կամ այն կարևոր հարցը ճշգրտելու համար:

Երբ հիշատակում ենք մարդու ազգությունը, սեռական կամ քաղաքական կողմնորոշումը, անհրաժեշտ է համապատասխան համատեքստ կազմել և հաղորդել ավելի շատ ինֆորմացիա:

♦ Խուսափեք կարծրատիպերի կամ նախապաշարմունքների վրա հիմնված սենսացիաներից

Յուրաքանչյուր մարդ տարբերվում է մյուսներից, այդ պատճառով փոքրամասնությունների ներկայացուցիչներին ևս պետք է վերաբերվենք այնպես, ինչպես անկախ անհատներին: Անընդունելի է մեկի վարքագծով դատել նույն հավատքի կամ ազգության բոլոր մյուս ներկայացուցիչներին, այնպես ինչպես վերոնշյալ թերթի հոդվածներից մեկի վերնագրում՝ *«Ինչպե՞ս են համասեռականները իրենց թակարդը գցում անփորձ տղաներին»*: Չի թույլատրվում, մեզ հայտնի հատկությունները վերագրել ամբողջ խմբին, նույնիսկ եթե դրսից այնպիսի տպավորություն ստեղծվի, որ խմբի բոլոր անդամներն ունեն նույն վարքագիծն ու տեսակետերը, կյանքը երբեք այդքան թեթև չէ: Փոքրամասնության որոշ անդամներ հնարավոր է, իրոք, վարվեն այնպես, ինչպես տարածված տեսակետերի համաձայն դա բնորոշ է իրենց խմբին, սակայն մեծամասնությունը հնարավոր է վարվի լիովին այլ կերպ: Որպես օրինակ որոշ հոմոսեքսուալ տղամարդիկ ունեն կանացի շարժուձևեր (այնպես, ինչպես որոշ հետերոսեքսուալներ), իսկ որոշ լեսբիներ տղայական տեսք ունեն,

սակայն դա բոլորին չի վերբերվում, այնպես ինչպես ոչ բոլոր սևամորթներն ունեն աթլետիկ կազմվածք:

Օբյեկտիվ լրագրողական ռեպորտաժի համար նախևառաջ անհրաժեշտ է վերլուծել մեր սեփական դիրքորոշումը և որոշել, չի հանդիսանում արդյո՞ք այն կողմնապահ: Պետք է բացահայտենք մեր սեփական և մեր խմբին բնորոշ կարծրատիպերն ու նախապաշարմունքները և համոզվենք չեն փոխում արդյո՞ք ընդհանրացված մեկնաբանությունները մեր ռեպորտաժի միտքը և չեն դրսևորում արդյո՞ք որևէ կրոնական կամ էթնիկ փոքրամասնության խտրականություն:

Զրուցենք որքան հնարավոր է շատ մարդկանց հետ և ներկայացնենք տեսակետերի որքան հնարավոր է լայն սպեկտր: Կիրառենք փորձագիտական աղբյուրների լայն ցանց և ամենապակասը, մեկ ամբողջ օր անցկացնենք Հռոմում անօթևանների, տրանսգենդերների և փախստականների հետ միասին, եթե իրականում ցանկանում ենք խորամուխ լինել թե ինչպես են ապրում այդ մարդիկ, ի՞նչ հույսեր ուներ, ինչի՞ց են վախենում, հաշտվում են արդյո՞ք մեր կարծրատիպերի հետ:

Ինչպես նաև, մեր անձնական փորձը երբեք չպետք է ազդեցություն գործի մեր ռեպորտաժի վրա, քանի որ դա անպատեհ է (իռելևանտ): Մեղավորների փոխարեն պետք է փնտրենք փաստեր և տրամաբանական բացատրություններ:

♦ **Զգուշացիր ստեղծել բացասական պատկերակ**. Փոքրամասնությունները հաճախ ստիպված են լինում կրել մյուսներից տարբեր լինելու բեռը: Պետք չէ նրանց նույնացնել նրա հետ, ինչը բոլորի մոտ վախ է առաջացնում, օրինակ, ահաբեկչության, օրենքի և իրավունքի խախտման, թմրանյութերի և զենքի վաճառքի, գողության, կանանց ճնշելու ու բռնությամբ ամուսնանալու հետ և այլն: Օրինակ, Հայաստանի խորհրդարանի անդամ «Հանրապետականներ» կուսակցության ներկայացուցիչ Մանվել Բաղեյանը վիրավորեց լրագրողին, որը հարց էր ուղղել նրան: Նա լրագրողին համեմատեց եզդի բակ մաքրողի հետ *«Միթե՞ այդքան ցածր է ձեր մակարդակը, որ*

նման հարց եք տալիս: Եթե այդ հարցն ինձ ուղղեր փողոցում մի ինչ-որ եզդի, չէի զարմանա, բայց միթե՞ դուք իսկապես այդպես եք մտածում»[1]

Կարևորագույն գաղափարը, որը պետք է հիշենք հետևյալն է՝ հանցագործությունը, աղքատությունը, կամ ողջամտությունը չունեն էթնիկ երանգ: Ինչպես նաև պետք է հասկանանք, որ հնարավոր է հանցագործությունն ու զրկանքը ունենան հենց համակարգում արմատացած պատճառներ և այդ պատճառով պետք է հիմնովին հետազոտենք համակարգը:

♦ **Խուսափիր «մենք» և «դուք» պատկերակները հակադրելուց:** Վրաց (հայ/ադրբեջանցի) ազգը բոլորին հավասար իրավունք-պարտականություններ է տալիս:

Պետք է հիշենք, որ փոքրամասնությունների որոշ ներկայացուցիչներ (քիստերը, աբխազները և այլն) միաժամանակ նաև վրացի են (այսորիները, քրդերը և այլն իրենց նաև հայ են համարում, իսկ լեկերը, թալիշները, տատերը, ավարները և աշկենազները՝ ադրբեջանցիներ): Անհրաժեշտ է գնահատել և՛ մեր միջև եղած տարբերությունները, և՛ այն, ինչ միավորում է տարբեր հավատք ունեցող մարդկանց՝ այդ թվում այնպիսի բարոյական արժեքները, ինչպիսիք են հյուրընկալությունը, ընտանիքի հանդեպ սերը, մեծահասակներին և կարիքի մեջ գտնվողներին օգնելու պահանջը:

---

[1] http://epress.am/en/2013/12/13/mp-who-offended-journalists-is-confident-he-wont-be- punished.html

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՅԹԱՅԹՈՒՄ և ԱՇԽԱՏԱՆՔ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՀԵՏ

Այս կամ այն նյութի մասին գրելիս առաջին քայլը պետք է լինի տվյալ թեմայի հետ կապված տեղեկատվության կուտակումը: Դրա համար մեզ հարկավոր են այն մարդիկ, որոնք անձամբ ներկա են գտնվել տվյալ իրադարձության ժամանակ, կամ նրանք, ովքեր քաջատեղյակ են մեզ հետաքրքրող թեմային: Դա հատկապես կարևոր է ժուռնալիստիկայի համար. Մեր կողմից կիրառված տեղեկատվությունը, մեր գրածի կորիզն է:

Երբ գրում ենք էթնիկ, կրոնական կամ սոցիալական փոքրամասնության մասին, չափազանց կարևոր է անձամբ զրուցել այդ խմբի ներկայացուցիչների հետ և նախատեսել նրանց հեռանկարները: Հակառակ դեպքում նրանք կդառնան ռեպորտաժի ոչ թե «սուբյեկտները», այլ «օբյեկտները»: Չի թույլատրվում հոդվածում կամ ռեպորտաժում քննադատել ամբողջ խումբը, առանց այդ խմբի անդամներին կարծիք արտահայտելու և արդարանալու հնարավորություն ընձեռելու:

Ուշադիր ուսումնասիրեք սոցիալական խմբերի մասին աղբյուրները: Փնտրեք այն մարդկանց, որոնք համաձայն կլինեն զրուցել, պատմել այն մասին, թե ինչ ցանկություններ ունեն իրենց խմբերը, ինչ հույսեր, ինչ մտավախություններ: Կապվեք այն ոչկառավարական կազմակերպությունների հետ, որոնք պաշտպանում են այդ խմբերի իրավունքները և հարցրեք, թե նրանց կյանքի ո՞ր ասպեկտները չեն լուսաբանվել առ այսօր: Խնդրեք ձեզ տեղյալ պահել այն քաղաքական, սոցիալական, տնտեսական և այլ գործընթացների հետ կապված, որոնց մասին չէիք տեղեկանա առանց նրանց օգնության: Հնարավոր է, ձեր պատմածը սկսեք հենց այն անձի կողմից տրամադրած տեղեկատվությամբ, որը հիմնախնդրին տեղյակ է հիմքից, կամ տիրապետում է դելիկատ տեղեկատվությանը:

♦ **Իմացիր, թե ում մասին ես խոսում:** Ուսումնասիրելով թեման մենք սովորում ենք ներթափանցել նրա համատեքստի ու բովանդակության մեջ: Պետք է պատրաստ լինենք, քանի որ

հնարավոր է մեր և ուսումնասիրվող թեմայի միջև ծագեն մշակութային խոչընդոտներ, որոնք կփակեն դեպի տեղեկատվություն տանող ճանապարհը: Այդ է պատճառը, որ ստիպված ենք ուսումնասիրել խնդիրը, փնտրել կայք էջեր և խորհրդակցել գործին տեղյակ փորձագետների հետ: Նրանցից շատերը հաճույքով կօգնեն մեզ ավելի խորը ներթափանցել թեմայի մեջ: Նրանցից տեղեկատվություն ստանալիս պետք է ընտրենք հարաբերության չեզոք ոճը և չկրկնենք մյուսների սխալները:

♦ **Ուսումնասիրեք տաբուները (արգելքների համակարգ):** Ուշադիր ծանոթացեք, թե ինչն են համարում անընդունելի այլ մշակույթի ներկայացուցիչները: Դա կարող է արտահայտվել նրանում, որ եկեղեցի կամ տուն մտնելիս անպայման պետք է հանել ոտնամանները, կամ նրանում, որ կանայք պետք է համեստ լինեն, կամ էլ, որ հյուրասիրությունից հրաժարվելը վիրավորական է:

♦ **Եղեք թերահավատ, վերստուգեք փաստերը և դեպքը լուսաբանեք բոլոր կողմերից:** Այստեղ թերահավատ ասելով ենթադրում ենք, որ առանց հիմնավորման պետք չէ վստահել այս կամ այն վկայությանը: Սակայն դա չի նշանակում ցինիզմ, որը ցանկացած մարդու նկատմամբ անվստահություն է ենթադրում: Կարևորն այն է, որ ի սկզբանե հեշտությամբ չվստահենք տեղեկատվությանը, կարևոր չէ, այդ տեղեկատվությունը հնչում է մեր թե մի այլ խմբի ներկայացուցիչների կողմից: Պետք է հիշենք, որ բոլոր մարդիկ, ում հետ զրուցում ենք, ունեն իրենց սեփական հետաքրքրություններն ու տեսակետերը: Այդ պատճառով որպես սովորություն պետք է ընդունենք հետևյալ հարցերի հղումը՝ ինչո՞ւ է ինձ պատմում այս մարդն այդ մասին: Չունի արդյո՞ք որևէ պատճառ կամ գաղտնի շահ: Ի՞նչ շահ կամ կարուստ կունենա նա այս տեղեկատվությունը լուսաբանելու դեպքում: Ձեռք բերված փորձի կամ տեղեկատվության հիման վրա ունի արդյո՞ք այս հարցերի շուրջ դատողություններ անելու որակավորում: Չի հաղորդում արդյո՞ք երկրորդ կամ երրորդ անձից ստացած տեղեկատվություն, որը մենք **ականջին հասած** ենք

անվանում (նման դեպքում պետք է ձգտենք հասնել տեղեկատվության առաջին աղբյուրին): Չունի արդո՞ք այս պատմությունն երկրորդ կողմ (կամ մի քանի կողմ): Դեպքը հավասարակշռելու նպատակով արել եմ արդյո՞ք առավելագույնը, հակառակ կարծիք լսելու համար: Իմ տեղեկատվությունը հիմնավորելու համար կիրառել եմ արդյո՞ք հեղինակավոր աղբյուրներ, որպեսզի ընթերցողները ճիշտ գնահատեն իմ ասածը: Քանի որ, ավելի լավ է ամեն ինչ սեփական աչքով տեսնել, ապա այնպիսի դեպք նկարագրելիս, որը մեր աչքով չենք տեսել, անհրաժեշտ է հավաստիանալ մեկից ավելի աղբյուրներից: Պետք է հիշենք, որ այսպես կոչված «մեկ աղբյուրի համախտանիշը» (single souce sindrom - SSS) կարող է ծայրահեղ վտանգավոր հանդիսանալ: Պետք է հիշենք նաև այն, որ եթե թվում է թե այնքան էլ համոզիչ չի հնչում, հնարավոր է, իսկապես չարժի դրան հավատալ: Պետք է տարբերենք փաստերը տեսակետերից, թեև տեսակետերին ևս պետք է մոտենանք վստահությամբ: Այլ կերպ ասած, լավ լրագրողը, որոշ չափով, նաև **լավ դատավոր է:** Նույն այն լրջությամբ պիտի կայացնենք որոշում, թե ընթերցողին ինչ տեսքով հաղորդենք տեղեկատվությունը, ինչ լրջությամբ էլ դատավորն է կայացնում դատավճիռը: Պետք է դատողություններ անենք, ունենք արդյո՞ք բավարար ապացուցող փաստաթղթեր, վավերական նյութեր, վստահելի վկայագրեր: Հաճախ ամենօրյա ռեպորտաժները պատրաստելիս հնարավոր է որ գործընթացը կրի սովորական բնույթ, սակայն դա չի կարելի քմահաճույթին մատնել միայն նրա համար, որ սովորականի է վերածվել: Սոցիալական խմբերի միջև հակամարտությունների հետ կապված տեղեկատվությունը մեծ մասամբ բարդ և հիմնախնդրային է: Հնարավոր է երկու կողմն էլ ունենան հիմնավոր փաստարկներ և հեռանկարներ, իսկ լրագրողի մասնագիտության կարևոր մասն է արդար և հավասարակշռված լուսաբանել երկուսի դիրքորոշումը: Պետք է ձգտենք ցույց տալ բարդ սոցիալական հիմնախնդիրների սևն ու սպիտակը: Ինչպես արդեն նշեցինք, մեր ռեսպոնդենտների թվում անպայման պետք է լինեն փոքրամասնությունների ներկայացուցիչներ ևս: Իսկ եթե անձը չի

ցանկանում զրուցել և պատասխանել մեր կողմից հղած հարցերին, դա պետք չէ համարել թշնամական ժեստ: Պետք է հաշվի առնենք, որ մարդը ոչ թե ինչ-որ բան թաքցնում է, այլ ուղղակի չի հասկանում թե ինչպես են աշխատում լրատվամիջոցները: Նման դեպքում պետք է զրուցենք այն կազմակերպության խոսնակի հետ, որը պաշտպանում է տվյալ փոքրամասնության շահերը: Ինչպես նաև անպայման պետք է նախատեսենք այս գործին մասնակցող բոլոր կողմերի կարծիքը:

♦ **Խնդրել ռեսպոնդենտներին, ցուցումներ տալ լրացուցիչ աղբյուրների մասին:** Հարցազրույցի ավարտին հարցնել, չկա արդյո՞ք ևս մեկը, ում հետ կարող ենք զրուցել տվյալ հարցի շուրջ: Հավանաբար կճանաչեն: Հնարավոր է, այս կամ այն կառավարական գործակալության, դպրոցի կամ ոչկառավարական կազմակերպության ներկայացուցիչները խորհուրդ տան իրենց կոլեգաներին, իսկ քաղաքացիները՝ այն անձանց, որոնք կիսում են իրենց տեսակետերը: Հնարավոր է, այս կամ այն կողմի ներկայացուցիչները մատնանշեն նաև հակադիր «ճամբարի» կողմնակիցներին: Ռեսպոնդենտի խորհուրդը պետք է նախատեսենք, սակայն չպետք է բացառենք նրա կանխակալությունը և անպայման պետք է համեմատենք նրա խոսքը մյուսների ասածի հետ:

♦ **Հարցաքննենք փոքրամասնությունների ներկայացուցիչներին մյուս թեմաների հետ կապված ևս:** Փոքրամասնությունների ներկայացուցիչները նույնպիսի քաղաքացիներ են, ինչպես և մյուսները, նրանց ևս նույն հիմնախնդիրներն են անհանգստացնում, ինչ և մյուսներին (աշխատազրկություն, գների աճ, երեխաների կրթություն և այլն): Հարկավոր է լուսաբանել նրանց կարծիքը այն հարցերի վերաբերյալ, որոնք հեռու են իրենց հավատքից և ազգությունից: Ներկայացնենք նրանց, որպես հասարակության շարքային անդամներ: Տարբերվող բեքգրաունդ ունեցող մարդկանց ներգրավումը անհրաժեշտ է ոչ միայն արդարության և հավասարակշռության պատճառով, այլ հարկավոր է լրագրողներին նաև գործնական տեսանկյունից: Որոշ լրատվամիջոցներ իրենց

պոտենցյալ ունկնդիրներին նվաստացնում են նրանով, որ միայն մեկ խմբին հարցաքննելով են սահմանափակվում: Եթե նրանք իրենց գործունեությունը զուգահեռաբար տարածեն տարբեր խմբերի վրա, ապա կծառայեն հասարակության տարբեր խմբերի շահերին: Միշտ պետք է հարցնենք ռեսպոնդենտին թե ինչպես ներկայացնել նրան լսարանին և անպայման նախատեսենք նրա ցանկությունը: Նյութը մշակելիս ուղղենք քերականական սխալները, եթե դրանք ռեպորտաժը ոչ պատշաճ են դարձնում:

♦ **Հիշենք կանանց և երեխաներին:** Այն սոցիալական խմբերում, ուր առաջատար դերում տղամարդիկ են պետք է չափազանց արմատականորեն գնահատել իրադարձությունները: Այդ պատճառով անհրաժեշտ է լսել նաև կանանց և երեխաների կարծիքները: Նույնիսկ այն հասարակության մեջ ուր դոմինանտ է հանդիսանում տղամարդը, մարդիկ մեծ մասամբ ընտանիքներով են ապրում: Կյանքի տարբեր ոճերի արտացոլումը ավելի մեղմ և մարդկայնորեն է ներկայացնում որոշ փոքրամասնությունների բնութագիրը, որն առանց դրա, կարող է կոպիտ և դաժան թվալ:

♦ **Խուսափեք ռեսպոնդենտների հետ չափազանց շատ մտերմանալուց:** Երբ որևէ մեկի հետ հաճախ հարցազրույց ենք վարում և նրա հետ ստիպված ենք երկար ժամանակ կապ հաստատել, նրան հնարավոր է, ընկալենք որպես ընկեր, սակայն չափազանց ավելի մտերմությունից կարող է տուժել մեր օբյեկտիվությունը: Եթե մտերմանանք ռեսպոնդենտի հետ, հնարավոր է, ակամա համաձայնվենք տվյալ հարցի հետ կապված նրա դիրքորոշման հետ, իսկ մյուսների վրա ստվեր գցենք: Նրան աջակցելու կամ պաշտպանելու նպատակով, հնարավոր է, ծագի նաև կարևոր տեղեկատվությունը թաքցնելու ներքին մղում: Չի բացառվում նաև, ընդհանրապես խուսափենք հոդված գրելուց, այն պատճառով, որ ռեսպոնդենտը չի ցանկանում հանրայնացնել տեղեկատվությունը:

♦ **Բացահայտիր և հակադրվիր ռասիստական քարոզչությանը**: Ամենից վտանգավորը այն մոլեռանդներն են, որոնք հասա-

ռակության մեջ պատվավոր տեղեր են զբաղեցնում: Պետք է հոգ տանենք այն մասին, որ նրանց անընդհատ մերկացնենք և անպատիժ չթողնենք նրանց վիրավորական արտահայտությունները:

♦ **Զգուշացիր տարածել ծայրահեղականների արտահայտությունները**: Պետք է ձգտենք հարցաքննել վստահելի և հարգարժան մարդկանց, զգույշ լինենք որոշ մարդկանց այն կարծիքները հրապարակելուց, որոնք որպես էքստրեմալ կընկալվեն մեծամասնության կողմից: Թեև որոշ դեպքերում անհրաժեշտ է դառնում հաղորդել նման ծայրահեղականների կարծիքը, այդ կարծիքը պետք է ներկայացնենք այնպիսի համատեքստում, որ դրսևորվի այդ մարդկանց շրջապատն ու բեքգրաունդը:

♦ **Ռեսպոնդենտների վիճակագրությունը**: Սխալ և չստուգված թվեր հիշատակելը կարող է առաջացնել ապատեղեկատվություն և դժգոհություն: Թվային տվյալները հարկավոր է վերստուգել վստահելի աղբյուրներից:

ՏԱՐԲԵՐ ԽՄԲԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ՎԱՐԵԼՈՒ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Աչալուրջ լսենք այն դեպքերն ու անեկդոտները, որոնք պատմում են մեզ հարցազրույցի ժամանակ: Երբ ռեսպոնդենտը մեր հետ զրուցելիս սկսում է պատմել որևէ դեպք, ամեն ինչ ճիշտ պետք է նշենք և հարցեր հղենք, անեկդոտը որքան հնարավոր է տպավորիչ և գունագեղ դարձնելու նպատակով: Գրելիս պետք է ձգտենք, որ դեպքը լինի հակիրճ, բայց ավարտուն՝ ունենա սկիզբ, կուլմինացիա և ավարտ: Եթե հնարավոր է գործածենք ուղղակի խոսքը, երկխոսությունները, նկարագրությունն ու դինամիկ գործողությունը: Սակայն, նույնիսկ ամենալավ անեկդոտն էլ անտեղին է, եթե այն կապված չէ գլխավոր սյուժեի հետ: Նման դեպքում այն չարժի գործածել: Նմանատիպ հակիրճ դեպքերը պատմելիս կիրառենք ժամանակի հանգամանքները, որոշ պատմություններ կարող են սկսվել հետևյալ կերպ՝ «Երեք տարի առաջ, հրաշագեղ մի առավոտ...», իսկ մյուսները՝ մանրամասնությունների նկարագրությամբ. «Նա իր այգու ծաղիկներն էր ջրում, երբ...»: Հարցազրույցը վարելիս պետք է ուշադրություն դարձնենք նաև մեր շուրջը տեղի ունեցող իրադարձությունների վրա, եթե անհրաժեշտ է, նշենք ոչ թե միայն հակիրճ արտահայտությունները այլ երկխոսության ծավալուն հատվածները: Խուսափենք ծանրաբեռնված, այսինքն այնպիսի միտումնային հարցերից, որոնք ռեսպոնդենտին դրդում են դեպի կոնկրետ դիրքորոշում: Հարցը չպետք է լինի համառ, սակայն խնդիրը պետք է քննարկվի հիմնովին և գործիմացաբար: Մարդիկ հաճախ չեն ցանկանում արտահայտվել, վախենալով ակնկալվող արդյունքներից: Լրագրողի պարտականությունն է արդյունավետ փաստարկների միջոցով ռեսպոնդենտներ ներգրավել տարբեր խմբերից: Ամենակարևորն է զրուցելիս չվիրավորել նրանց իրավունքներն ու զգացմունքները:

Այն ինչ տեղի է ունենում «կադրից դուրս», մնում է «կադրից դուրս»

Բոլորս ճանաչում ենք այնպիսի լրագրողների, ովքեր հայտարարում են որ «կադրից դուրս» հասկացություն գոյություն չունի, կամ խոստանում են ռեսպոնդենտներին, որ չեն հրապարակի այս կամ այն ինֆորմացիան, սակայն երկրորդ օրն ևեթ տեղադրում են այն ռեպորտաժի մեջ:

Մ՚ի եղեք նման լրագրող:

Բազմաթիվ ռեսպոնդենտներ ցանկանում են պատմել շատ ավելին, քան ցանկանում են նրանցից վերադասները: Նման տեղեկատվությունը հնարավոր է լինի շատ արժեքավոր, մանավանդ, եթե նրանց միջոցով կարողանանք հետամուտ լինել այն ռեսպոնդենտների, որոնք հաստատեն լսածը կադրում: Սակայն եթե որևէ մեկը խնդրում է չձայնագրել իր զրույցը, մենք պետք է տանք դրա երաշխիքը և կատարենք մեր խոստումը: Միշտ պետք է հղենք հետևյալ հարցը՝ «կարող ե՞ք մատնանշել որևէ մեկին, ով կկարողանա խոսել այդ մասին կադրում»:

Զրուցակիցներից շատերը խնդրում են անջատել ձայնագրիչ սարքը, ոչ միայն նրա համար, որ ցանկանում են ասել որևէ նրբաբնույթ բան, այլ դրանով ստուգում են լրագրողին: Ցանկանում են հասկանալ, թե որքանով հարգալից ենք վերաբերվում կոնկրետ տեղեկատվությունը չհրապարակելու նրանց խնդրանքի նկատմամբ: Եթե կարողանանք հրապարակել մանրամասները, առանց ռեսպոնդենտին բացահայտելու, դրանով ավելի կշահենք նրա վստահությունը: Ժամանակի ընթացքում նա հնարավոր է հայտնի մեզ շատ ավելին:

Պրոֆայլներ

Պրոֆայլները այուժեներ են, որոնք բնութագրում են կոնկրետ անձանց: Դրանք կարող են լինել կարճ և ծավալուն: Կարճ պրոֆայլը ավելի հաճախ ցույց է տալիս, թե ինչպես է կապված անձի կյանքը ավելի ծավալուն կերպով լուսաբանած այս կամ այն հիմնախնդրի հետ: Կարճ պրոֆայլները հիմնական տեքստը հաճախ ներկայացնում են **կողային վահանակների (այունակների)** տեսքով: Ավելի ծավալուն և խորը պրոֆայլը պատմում է, թե ով է այս կամ այն անձնավորությունը, ինչպես է նա հասել հաջողությունների և այլն: Այսպիսի այուժե պատրաստելու համար պետք է հարցաքննել մարդկանց, որոնք մտերիմ են այդ անձնավորության հետ: Ծավալուն պրոֆայլի դեպքում անպայման է զրուցել նրա ընկերների, նախկին կոլեգաների, ինչպես նաև հակառակորդների հետ: Անձի լիարժեք դիմանկարը հնարավոր է ստեղծել միայն մյուս անձանց հետ զրուցելու արդյունքում:

Պրոֆայլին այնպես, ինչպես և ռեպորտաժին վերաբերում են լրագրողական էթիկայի նույն ընդհանուր օրենքները: Նախատեսենք հետևյալ ռազմավարությունները՝

- Նախքան հարցազրույցը որքան հնարավոր է մանրակրկիտ տեղեկություններ քաղեք անձնավորության մասին: Կիրառեք օնլայն և տեանյութեր և տրվելիք հարցերի հետ կապված խորհուրդ վերցրեք կոլեգաներից:
- Հարցազրույցի համար ընտրեք հանգիստ վայր: Ոմանց համար դա կարող է լինել սեփական բնակարանը, ոմանց համար էլ՝ աշխատանքի վայրը: Ուշադիր ուսումնասիրեք ռեսպոնդենտի արտաքինը, հագուկապը, ինչպես նաև շրջապատող միջավայրը և այս ամենը աներկյուղ նկարագրեք պրոֆայլում:
- Փորձեք գտնել այդ անձնավորության ունիկալ կողմը: Ինչի՞ մասին է երազում, ինչի՞ց է նեղվում, ո՞վ է նրա հերոսը, որո՞նք են նրա թույլ և ուժեղ կողմերը, որո՞նք են նրա սիրելի գրքերն ու ֆիլմերը: Ինչպե՞ս է հաղթահարում դժվարությունները:

- Հարցազրույցը պետք է երկար տևի, իսկ պրոֆայլը բավականին ավելի կարճ պետք է գրվի: Պրոֆայլում պետք է տեղադրվեն միայն տպավորիչ նյութերը, միայն լավագույն արտահայտությունները:
- Հրահրեք ռեսպոնդենտին պատմել այնպիսի դեպքեր, որոնք կարող եք կիրառել որպես անեկդոտներ:
- Չմոռանանք նաև այն բեքգրաունդը, որի միջոցով ընթերցողը կհասկանա, թե ինչու՞ պետք է հետաքրքրվի այդ անձնավորությամբ: Չի հանդիսացել արդյո՞ք վերջերս մամուլի հետաքրքրության առարկա, կամ չի մասնակցել արդյո՞ք այնպիսի իվենթին, որը լրատվամիջոցների հետաքրքրությանն է արժանացել: Չի սկզբնավորել արդյո՞ք հասարակության մեջ լայն տարածված որևէ տենդենց:

Որպես օրինակ առաջարկում ենք «Լիբերալ» ամսագրում հրապարակված հոդվածի սկզբնական մասը, որի հեղինակն է Դաթո Փարուլավան:

«Իմ անունն է Նատա»

Ամսագիր «Լիբերալ»

21 տարեկան Նատան տրանսգենդեր կին է: Այսօր իր հացը վաստակում է աշխատելով գեղեցկության սրահում: Թեպետ 4 տարի առաջ ամեն ինչ այլ կերպ էր: Քաղաք նոր ժամանած Նատան, ստիպված էր կրել այն նույն զրկանքները, որը կրում են հասարակության կողմից մերժված բոլոր տրանսգենդերները»:

ՄԱՆՐԱՄԱՍՆ ՌԵՊՈՐՏԱԺԻ և ԹԱՐՄ ԼՈՒՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Ժուռնալիստիկան, առաջին հերթին, արտացոլում է ընթացող իրադարձությունները, սակայն չի սահմանափակվում թարմ լուրերով: Վերջին տարիներին համացանցի միջոցով հնարավոր դարձավ արագ, ցանկացած ժամանակ և ամենուր տարածել տեղեկատվությունը: Այսպիսով, այսօր լրատվամիջոցների ամենակարևոր պարտականություններից մեկը դարձել է՝ օգնել լսարանին հասկանալ աշխարհը, ավելի մեծ ուշադրություն դարձնել նոր լուրերի վերլուծությանը, քան ուղղակի տեղեկատվություն տրամադրելուն: Հատկապես այն դեպքում, երբ ռեպորտաժը վերաբերում է կրոնական հողի վրա տեղի ունեցած հակամարտություններին կամ միջադեպերին, վատթարացած ներքին էթնիկ հարաբերություններին, երկխոսության բացակայությանը, խտրականության ու անհանդուրժողականության փաստերին, անընդունելի է կենտրոնանալ միայն ընթացող իրադարձությունների վրա: Այլ կերպ ասած, այս իրադարձությունները չպետք է ներկայացնենք, որպես կարճատև փայլատակում կամ մեկուսացված գործընթաց: Լրագրողը պետք է ձգտի գտնել ներթափանցման նոր տարբերակներ, տրամադրել լսարանին լրացուցիչ տեղեկատվություն, որը կօգնի հասարակությանը իրադարձության մեջ խորամուխ լինելու և ամբողջական պատկերը տեսնելու մեջ: Դա հնարավոր է հետևյալ հարցերին պատասխանելով՝

- Ի՞նչ հետևանք կունենա տեղի ունեցածը:
- Ինչպիսի՞ն է ավելի մանրամասն բեքգրաունդը և համատեքստը:
- Ծավալուն դարձնենք ռեպորտաժը ավելացնելով այլ իրադարձություններ, որոնք կօգնեն լսարանին ավելի լավ հասկանալ տվյալ իրադարձությունը:
- Տեսնենք իրադարձության մասշտաբները համեմատական համատեքստում՝ այս իրադարձությունն առաջինն է արդյո՞ք նմանատիպ իրադարձությունների թվում: Ամենամեծն ու երկարատևն է արդյո՞ք:

- Ուշադրություն դարձնենք ոչ միայն իրադարձության բովանդակության, այլ նաև շարքային քաղաքացիների հանդեպ նրա ազդեցության վրա:
- Խոսացնենք այն մարդկանց, որոնց վրա իրադարձությունը անմիջական կերպով է ազդել և այն փորձագետներին, որոնք ներգրավված են այս գործընթացին:

Նախատեսելով վերոնշյալը, իրադարձությունը պետք է ընկալենք ոչ թե առանձին, այլ նմանատիպ իրադարձությունների համատեքստում: Էթնիկ, կրոնական կամ այլ սոցիալական հակամարտությունները անառիթ չեն առաջանում: Որպես օրենք, այսպիսի հակամարտությունները ունեն երկար պատմություն և երկու կողմն էլ դրա մասին խիստ տարբեր կերպ է պատմում: Լսարանին անկեղծ և հասկանալի կերպով նյութ հաղորդելու նպատակով, պետք է հասկանանք թե ինչ է տեղի ունեցել մինչ այդ, իսկ հետո որոշենք թե այդ ժամանակ տեղի ունեցածից ինչ ավելացնենք մեր ռեպորտաժին, որպեսզի լսարանին ավելի կատարյալ կերպով ներկայացնենք իրադարձության էությունը:

Լրագրողներից շատերը ամփոփում են օրվա մասնատված իրադարձությունները, սակայն հակամարտության կամ պատահարի մասին գրելու համար դա բավարար չէ: Անհրաժեշտ է հղել հետևյալ հարցերը՝ Ի՞նչն է այսօրվա իրադարձության ծագման պատճառը: Հնարավոր էր արդյո՞ք, որ ամեն ինչ տեղի ունենար այլ կերպ: Հնարավոր էր արդյո՞ք խուսափել այս իրադարձությունից: Ի՞նչ միջոցներ են կիրառվել դրա հետ կապված: Ի՞նչ կարելի է անել ապագայում:

♦ **Քո առաքելությունը, առաջին հերթին, պետք է լինի համընդհանուր փոխըմբռնման հաստատումը**: Դրան հասնելու նպատակով պետք է ձգտենք վերացնել այն պատնեշները, որոնք խափանում կամ անհնարին են դարձնում ամենօրյա հաղորդակցությունը: Մեր դերը շատ ավելի մեծ է, քան միայն նորություններ տարածելը: Դրա համար լավագույն հնարավորություններից մեկն է, կրոնի հետ կապված թեման կապել

երկրում կամ աշխարհում արդիական իվենթի հետ: Այդպիսով, լարանի մոտ կստեղծվի այն տպավորությունը, որ լոկալ թեման քննարկվում է գլոբալ համատեքստում:

♦ **Մի եղիր չափից ավելի ամբիցիոզ**: Եթե քննարկում ենք էթնիկ կամ կրոնական հողի վրա տեղի ունեցած տարաձայնությունը, պետք չէ ձգտել պատասխան տալ հետևյալ հարցին՝ «Չի կանգնած արդյո՞ք ռիսկի առջև մեր երկրի քաղաքական համակարգը», այլ ուղղակի պետք է փորձել հասկանալ, թե ինչ է տեղի ունեցել և ինչ է այն մատնացույց անում երկրում էթնիկ թե կրոնական փոքրամսնությունների կարգավիճակի մասին: Չկա այրդյո՞ք այնպիսի կառուցվածքային խտրականության տեղիք, որը բխում է մեր հասարակության համակարգից: Ինքնըստինքյան գոյություն ունեցող համակարգը որոշակի խմբերի կամ մարդկանց համար չի ստեղծում արդյո՞ք այնպիսի նորմերով ու օրենքներով անբարենպաստ պայմաններ, որոնց պատճառով ոչ բոլորն են օգտվում հավասար իրավունքներից և հնարավորություններից:[1] Իսկ երկրի ապագայի մասին դեռ կհասցնենք մտածել:

Ի՞նչ պետք է անենք առաջին հերթին: Գրենք այն մարդկանց ցուցակը, որոնց հետ ուզում ենք զրուցել: Հարկ կլինի խոսել և՛ այն մարդկանց հետ ով կարող է տալ անկողմնակալ գնահատական (անկախ անձինք), և՛ նրանց հետ, ովքեր ավելի մոտ են տեղի ունեցած իրադարձության հետ, գուցե նաև համամասնակիցն են կամ տուժածը (պրոտագոնիստ): Նրանց տեսակետերը, հավանաբար ավելի միակողմանի և կողմնակալ կլինեն, այդ պատճառով էլ մեր ապահովագրության համար, պետք է անցկացնենք խաչաձև հարցաքննություն:

Նախևառաջ զրուցեք անկախ անձանց հետ: Առաջին հերթին նշեք, որ ձեզ ավելի շատ հարկավոր է նրանցից ուղղորդում ստանալը, քան հարցազրույցն ու որպես մեջբերումներ օգտագործվող արտա-

---

[1] «Չնայած նրան, որ Երևանը ինձ չի տվել ազատ գործունեության հնարավորություն, ես միևնույն է սիրում եմ իմ քաղաքը»:

հայտությունները, սակայն ոչ էլ վերջինն եք բացառում: Ինչպե՞ս է նա գնահատում տեղի ունեցածի նշանակությունը: Խորհուրդ վերցրեք թե ում հետ կարող եք վարել հարցազրույց: Այդ առաջին զրույցը չի տա սպառիչ տեղեկատվություն, սակայն կօգնի խորամուխ լինել իրավիճակի մեջ և մատնացույց կանի, թե որտեղ փնտրենք և ում հարցաքննենք: Ողջ աշխատանքային գործընթացում ամենակարևորն է ճիշտ անցնել այս փուլը:

Դրանից հետո պրոտագոնիստներին դիմելու ժամանակն է: Հնարավոր է նրանց հետ ավելի դժվար լինի հաստատել հարաբերություն, քանի որ որոշ դեպքերում նրանք չեն վստահում մամուլին կամ չեն ցանկանում զրուցել լրագրողի հետ: Այդ պատճառով նրանց հետ կապվելուց առաջ պետք է գրառենք մի քանի հանգուցային հարց: Հանգամանորեն պետք է հիշենք, թե բլոկնոտի որ էջում ենք գրառել այդ հարցերը, որպեսցի հարմարավետ պահին, ցանկալի անձնավորության հետ հեռախոսով կապվելուց կամ հանդիպելուց անմիջապես հետո, միանգամից կարողանանք գտնել դրանք: Եթե զրույցի ժամանակ որևէ մեկը մեր համար անսպասելի փաստարկ կամ ուղղություն է մեջբերում, պետք չէ ետ բերել նրան մեր կողմից նախապես ծրագրված շրջանակի մեջ, եթե նա մասնավորապես չի հեռանում թեմայից: Մեր հարցերը մեկը մյուսի հետևից հղելուց շատ ավելի կարևոր է հասկանանք նրա ասածն ու խորամուխ լինենք զրույցի թեմայի մեջ:

- Միշտ պետք է հիշենք, որ որևէ հակամարտության կամ բախման մասին գրելիս անհրաժեշտ է բացահայտել և լուսաբանել ոչ միայն հակադրված կողմերն իրարից հեռացնող, այլ նաև նրանց միավորող բոլոր տարրերը:
- Հստակ թվարկենք բոլոր այն կետերը, որոնք կօգնեն մեզ և լսարանին հարցին խուրամուխ լինելու գործում: Դա կօգնի մեզ տարբերվող պահերը միմյանց կապելու և հակադիր դիրքորոշումները ճիշտ հասկանալու մեջ: Վերջում պետք է ընտրենք հանգուցային տեղեկատվություն, որը կներկայացնի իրադարձության լիարժեք պատկերը:

♦ **Պարզաբանիր, թե ինչո՞ւ և ինչպե՞ս են տեղի ունենում իրադարձությունները:** Ժուռնալիստիկայում ֆունդամենտալ հարցերից մեկն է՝ «ինչու՞» հարցը: Առանց համապատասխան համատեքստի այդ հարցը հաճախ մնում է անպատասխան: Այդ պատճառով պետք չէ կենտրոնանալ միայն անմիջականորեն ընթացող իրադարձությունների վրա: Պետք է փորձել ստեղծել համապատասխան համատեքստ և պարզաբանել այն իրադարձությունները, որոնք լուսաբանում ենք: Համատեքստ ստեղծելով օգնում ենք մարդկանց ավելի ճիշտ ըմբռնել հիմնախնդիրները: Դրա միջոցով նրանք կկազմեն սեփական կարծիք և կհանգեն համապատասխան եզրակացության: Ռեպորտաժ պատրաստելիս ուշադիր պետք է ուսումնասիրենք այն ամենը, ինչ տեղի է ունենում մեր շուրջը և անենք մանրամասն գրառումներ՝ գրառենք երկխոսության ոչ թե հակիրճ արտահայտություններն, այլ ծավալուն հատվածները:

♦ **Գրառիր զգացմունքները:** Մի գրառիր միայն այն ինչ լսում ես: Եթե անձը ձայնը բարձրացնում և բղավել է սկսում, հակիրճ գրառիր, ի՞նչն էր նրա զգացմունքային ռեակցիայի պատճառը և ինչո՞վ արտահայտվեց այն: Պետք է գրառենք նաև մեր և մոտակայքում գտնվող մարդկաց զգացմունքներ: Եթե շահավետ է դեպքի հաղորդման համար, պետք է գրառենք նաև այն ինչ տեսնում ենք, ինչպիսի հոտ է գալիս և այլն:

♦ **Ձեռք բեր ստույգ փաստեր և հստակ ձևակերպիր,** որպեսզի լսարանը ճիշտ ըմբռնի և արդարորեն գնահատի տեղի ունեցածը: Իրավիճակը ճիշտ ըմբռնելու արդյունքում մարդիկ հաճախ նախնականից լիովին տարբերվող եզրակացությունների են հանգում:

♦ **Խուսափիր էքսպրեսիվ բառապաշար գործածելուց,** որը հաճախ կոնֆլիկտի կողմերից որևէ մեկի վրա «դեմոնիզացիա» (հրեշայնացում) է իրագործում:

ԷԹՆԻԿ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵՄԱՅՈՎ ՊԱՏՐԱՍՏԱԾ ՌԵՊՈՐՏԱԺՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Որպես լրագրող, հնարավոր է, հարկ լինի լուսաբանել մեր հասարակության մեջ գոյություն ունեցող փոքրամասնությունների հետ կապված խնդիրները: Դա կարող է լինել փոքր կրոնական սեկտա, որը առկա է մեր տեղական հասարակության մեջ, կամ քանակապես մեծ էթնիկ խումբ, որը բնակվում է կողք կողքի հիմնական բնակչության հետ:

Արդի աշխարհում հազվագյուտ է դարձել ավանդական ազգային պետությունը, ուր կոնկրետ տարածքում բնակվում է մեկ կոնկրետ ազգության բնակչություն, իսկ բազմաէթնիկ պետությունները դարձել են սովորական: Մեր հասարակության շրջանում բազմաթիվ պատճառներից ելնելով կան տարբերվող խմբեր, հնարավոր է դրանք լինեն՝ ա) էթնիկ կամ լեզվական խմբեր, որոնք սահմանները ընդլայնելու կամ այլ պատճառով մեր ժողովրդից ինքնուրույն կամ հնարավոր է գաղութային իրավունքներով են համագոյակցում: Օրինակ՝ վրաց փոքրամասնությունը Թուրքիայում, կամ ռուս փոքրամասնությունը Վրաստանում, Հայաստանում թե Ադրբեջանում: բ) Այն մարդիկ որոնք փախել են հարևան երկրներից և ունեն գաղթականի կարգավիճակ, օրինակ՝ պաղեստինցիները Լիբանանում, գ) Այն մարդիկ, որոնց մոտ իրենց կրոնի պատճառով ձևավորվել է տարբերվող ինքնություն, դ) այն անհատները, որոնք բնակության ավելի բարեկեցիկ պայմանների հույսով եկել են մեր երկիր:

Գլոբալացումը և սահմանների միջև մարդկանց աճող երթևեկությունը ազգային պետությանը վերջնական ոչնչացմամբ է սպառնում: Այնուամենայվիվ, շատ առասպելներ առ այսօր պայքարում են իրականության հետ և աշխարհի երկրներում բնակվող մեծամասնությունը շատ հաճախ փորձում է փոքրամասնության վզին փաթաթել իր ինքնությունը:

Չնայած նրան, որ քսաներորդ դարը մեզ վարժեցրել է կիրառել «էթնիկական կոնֆլիկտ» տերմինն այնպես, կարծես դա մի բառ լինի,

իրականում այս երկու բառը միշտ չէ, որ կանգնած են եղել կողք կողքի: Մեկմեկու ընդունելով, երկխոսությանը և իրադարձություններին համատեղ մասնակցելով, բազմազան հասարակության յուրաքանչյուր քաղաքացի ավելի լավ է հասկանում միմյանց մտահոգությունը և այս գործում կարևոր դեր են խաղում լրատվամիջոցները: Այդ պատճառով էլ՝

- Խուսափենք սենսացիոն վերնագրերից, որոնք կարող են առաջացնել հասարակության չափազանցված ուշադրություն այս կամ այն հիմնախնդրի նկատմամբ: Սենսացիոն վերնագիրը կամ հոդվածը կարող է դառնալ տեղի ունեցածի խեղաթյուրված կամ կեղծ պատկեր ստեղծելու նախապայման: «Արյունալի վրեժխնդրություն: Այսօրվա սպանության մանրամասները»[1] – սա այն հոդվածի վենագիրն է, որը պատմում է հոգեհացի ժամանակ հավաքված եզդիների դաժան ընդհարման մասին, որի արդյունքում զոհվել է չորս եզդի, իսկ յոթը՝ վիրավորվել: Վերնագրի և հոդվածի ենթատեքստը հետևյալն է՝ եզդիները մարդասպաններ են և տարաձայնության դեպքում միմյանց կոտորում են:
- Անհատների ակտիվությունը չի թույլատրվում վերագրել ամբողջ խմբին: Պետք է խուսափենք այնպես հիշատակել էթնիկ խմբերի ներկայացուցիչներին, ինչը նրանց կդրսևորի որպես «հասարակությունից դուրս» գտնվող մարգինալներ: Օրինակ, երբ լրատվամիջոցները շարունակաբար հիշատակում են բոշաների կողմից իրավական նորմերի խախտման փաստերը, դրանով խորացնում են այս խմբի հետ կապված կարծրատիպերը, որոնց համաձայն մարդիկ գտնում են, որ բոլոր «բոշաները գողեր են» և այլն: Լրատվամիջոցներում

[1] http://newsarm.am/?p=13504&l=en&google_query_id=feb2f506e0a1b2eb01ca849397692e0d&google _serp_position=70

գոյություն ունի նաև, որոշ բոշաների ակտիվությունը ողջ պոպուլյացիայի վրա ընդհանրացնելու միտում:

- Անձի ազգությունը պետք է հիշատակենք միայն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ ենք համարում հարցի մեջ խորամուխ լինելու նպատակով:
- Երբ հիշատակում ենք ազգությունը, հարկավոր է կազմել համապատասխան համատեքստ, կամ ձեռք բերել ավելի շատ տեղեկատվություն:

Փաստերը լուսաբանենք կշռադատված, ճիշտ և կոռեկտ կերպով:

- Նյութեր հավաքելիս զրուցենք որքան հնարավոր է շատ անձանց հետ և մեր ռեպորտաժում ներկայացնենք հակամարտության բոլոր կողմերը:
- Մի պատրաստեք ռեպորտաժ, այնպիսի ռեսպոնդենտի զրույցի հիման վրա, որն ունի նեղ տեսադաշտ: Եթե մեր զրուցակիցը ամբողջապես է քննադատում այս կամ այն էթնիկ խումբը, ապա իրավունքի խոսք պետք է տալ այդ խմբի ներկայացուցիչներին ևս: Հակառակ դեպքում, հնարավոր է, մեղադրվենք միակողմանի քարոզչություն անցկացնելու մեջ:
- Ռեսպոնդենտների հետ զրուցելուց բացի պետք չէ մոռանալ վերստուգել նշված տեղեկատվությունը և գիտակցել այն, թե ինչ շահեր կարող է հետապնդել այս կամ այն արտահայտությունը:
- Պետք է ներդնենք առավելագույն ջանքեր, ռեսպոնդենտի «թաքնված օրակարգը» բացահայտելու նպատակով, ձգտենք հայտնաբերել հասարակական կարծիքով ձեռնածության փորձեր:

Ընտրենք հաղորդակցության բացահայտ միջոցներ.

Հավասարակշիր ռեպորտաժ պատրաստելու նպատակով լավ կլինի, եթե խոհրդակցենք բազմածավալ խմբի կամ տարածաշրջանի

ներկայացուցիչների հետ: Դա կօգնի գտնել թեմային մոտենալու լավագույն ուղին:

- Չափազանց շահավետ կլինի զրուցել այն խմբի ներկայացուցիչների հետ, որին մենք չենք պատկանում: Նախատեսելով նրանց տեսակետերը, հետաքրքրությունները, մտահոգությունը ի հայտ կգան նոր գաղափարներ և թեմաներ:
- Հարկավոր է զրուցել տվյալ դեպքի հետ կապված բոլոր խմբերի ներկայացուցիչների հետ: Նկատի ունենք ոչ միայն նրանց, ովքեր իրենց որպես առաջնորդներ են ներկայացնում, այլ նաև նրանց, ովքեր կարող են տեղեկատվություն տրամադրել: Ծարքային մարդկանց կարծիքը հաճախ տարբերվում է այն մարդկանց կարծիքից, ովքեր իրենց որպես խմբի շահերի պաշտպաններ են ներկայացնում:
- Եթե էթնիկ խմբի այս կամ այն անդամը հրաժարվում է զրուցել, դա պետք չէ համարել թշնամական ժեստ: Հնարավոր է, այդ անձնավորությունը չի ցանկանում բացահայտել իր ձեռքի տակ եղած տեղեկատվությունը:
- Հակամարտությունը լուսաբանելիս անհրաժեշտ է, ընդգրկել բոլոր կողմերին ու մասնակիցներին, և բացատրել նաև, թե ինչն է տարանջատում նրանց միմյանցից: Հստակ գրառենք բոլոր կետերը, որոնք հարցին խորամուխ լինելու նպատակով անհրաժեշտ կլինեն մեր և լսարանի համար: Այդպիսով կկարողանանք կապել իրար իրադարձությունները և նախատեսել յուրաքանչյուր մասնակցի տեսակետը:
- Հնարավոր է, մարդկանց վարքագծի ու զրույցի հիման վրա ակնհայտորեն հասկանանք, որ տարբեր խմբերի ներկայացուցիչներ միմյանցից բայց և այնպես չեն տարբերվում: Այդպես կկարողանանք, ամբողջ դեպքը տեսնել այնպես, որ զերծ մնանք սուբյեկտիվությունից: Պետք չէ նույնացնել

էթնիկ փոքրամասնություններին հասարակության մեջ ընթացող բացասական գործընթացների ու միտումների հետ:

- Տարբերենք իրարից անհատների գործողությունները և այն էթնիկ փոքրամասնությունների ընդհանուր պատկերը, որին նրանք պատկանում են:
- Խուսափենք կապել որոշակի փաստերն ու խմբերը քրեականության հետ: Երբ ռեպորտաժը վերաբերում է բանտարկյալներին կամ հանցագործներին, լավ կլինի առաջնահերթ չդարձնենք այն փաստը, որ նրանցից ոմանք էթնիկ փոքրամասնությանն են պատկանում և ոչ մեկին չկպցնեք բացասական պիտակ: Սանձենք մեր նախապաշարմունքները: Օբյեկտիվ ռեպորտաժ պատրաստելիս, նախևառաջ վերլուծենք թեմայի հետ կապված սեփական դիրքորոշումը և ստուգենք չի պարունակում արդյոք այն միտումնավորություն:
- Կարևոր է, որ ռեպորտաժում չնկատվի միակողմանի դիրքորոշում: Մենք պետք է լուսաբանենք մարդկանց իրական վիճակը՝ նրանց զգացմունքները, մտավախությունները, տեսակետերը և այլն: Լրատվամիջոցների դերն է կարեկցանքով ու անաչառ ներկայացնել մարդկանց իրական դեմքը:
- Հնարավոր է, այս կամ այն իրադարձության կամ իրավիճակի ճիշտ և կատարյալ պատկեր ստեղծելու համար անհրաժեշտ լինի հավելյալ տեղեկատվություն:
- Իրադարձություններին պետք է նայենք ոչ թե որպես համատեքստից վերցրած առանձին փաստեր, այլ իրենց միասնականության մեջ:
- Հաճախ լինում է, երբ էթնիկ հակամարտությունները կամ տարաձայնությունները ներկայացված են որպես առանձին մեկուսացված իրադարձություն: Լսարանին կատարյալ պատկեր ներկայացնելու նպատակով անհրաժեշտ է ձեռք

բերել լիարժեք տեղեկատվություն անցյալ և ընթացող իրադարձությունների մասին:

- Ծով նյութերից պետք է ընտրենք այն հանգուցային տեղեկատվությունը, որը կօգնի մեզ կատարյալ պատկեր ստեղծելու գործում: Եթե գործը վերաբերում է էթնիկական հակամարտությանը, ապա դրա վրա կենտրոնանալուց բացի, պետք է ցույց տանք նաև, թե ինչ ազդեցություն է այն գործում շարքային բնակչության վրա:

Ճարունակաբար ստուգեք ստացած տեղեկատվությունը.

- Հարկավոր է հիշել, որ աշխատանքի յուրաքանչյուր փուլում պետք է վերստուգել տեղեկատվությունը: Էթնիկ հակամարտությունների դեպքում կողմերի հուզական լիցքը բավականին բարձր է, իսկ լսարանն ունի տեղեկատվության «ընչաքաղցություն»: Եթե ընթացող տեղեկատվությամբ կարողանանք բավարարել այդ ընչաքաղցությունը, ապա ապահովագրված չենք լինի սխալներից, հնարավոր է աչքաթող անենք չստուգված տեղեկատվության արտահոսքը կամ նույնիսկ չարաշահությունը, ինչը կարող է վնասակար արդյունք ունենալ հասարակության համար: Լսարանին պետք է տանք տեղեկատվությունը տրամադրող անձի, նրա շարժառիթների մասին ավելի շատ բան իմանալու հնարավորություն, որպեսզի ինքնուրույնաբար կարողանան ստեղծել իրական պատկեր:

Լինենք անկողմնապահ:

- Եթե օգտվում ենք միայն մի կողմի տրամադրած տեղեկատվությունից, ապա էթնիկ հակամարտության կամ լարվածության վերաբերյալ անհնար է պատրաստել օբյեկտիվ ռեպորտաժ: «Այն, ինչ չենք տեսնում, դժվարանում ենք ըմբռնել»: Եթե լսենք միայն մի կողմին, ապա չենք ընկալի նաև հակամարտության պատճառները:

- Ռեպորտաժ պատրաստելիս պետք է լինենք անառաջ, պետք չէ շեղվել դեպի որևէ կողմի շահերի պաշտպանությունը: Դա անմիջապես աչքի կընկնի և ոչ միայն կնպաստի կոնֆլիկտի խորացմանը, այլ նաև նշանակալիորեն կվարկաբեկի լրատվամիջոցը:

ՏԱՐԵՑ ՄԱՐԴԿԱՆՑ ԹԵՄԱՅԻ ՇՈՒՐՋ ՊԱՏՐԱՍՏԱԾ ՌԵՊՈՐՏԱԺՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Բազմաթիվ երկրներում անցկացված հետազոտությունները ցույց են տվել, որ գոյություն ունեն տարեց մարդկաց հետ կապված բացասական կարծրատիպեր: Նորությունները, հեռուստատեսությունը և ֆիլմերը, որպես օրենք, ցույց են տալիս տարեցների հետ կապված բացասական պատկերացումներ, ուշադրությունը սևեռելով ծերության «ծանրացուցիչ» կողմերի վրա:

Ավանդական հասարակություններում, որպես օրենք, տարեց հասակն ուներ իր գնահատականը, ծերությունը ասոցացվում էր իմաստության հետ, ծեր մարդիկ իմաստուն խորհուրդներով օգնում էին և՛ ընտանիքին, և՛ հասարակությանը: Կոմունիզմի գաղափարի տապալումից և Խորհրդային միության փլուզումից հետո, սոցիալական և տնտեսական կառուցվածքների ձևափոխման հետ միասին հետխորհրդային երկրներում բազմաթիվ ծերեր հայտնվեցին անմխիթար վիճակում: Շատ դեպքերում նրանց կենսաթոշակը բավարար չէր, նրանք զրկվեցին բոլոր հույսերից ու տարրական կենսական պայմաններից:

Այնպիսի ատրիբուտներն, ինչպիսիք են՝ «կոմունիստական համակարգի տապալման զոհեր», «դժգոհ», «հնաոճ», «ամեն ինչ մոռանում են», «դժվարանում են նոր գործ սովորել», «հիվանդ», իրենցից ներկայացնում են տարածված կարծրատիպեր: Նման ատրիբուտների կիրառումը, ինչպես նաև տարեց մարդկանց և ծերության հետ կապված գործածվող բացասական բառապաշարը, լրատվամիջոցների կողմից ներկայացվող ծերերը՝ որպես օրենք, ծերությունից կռացած, գլխաշորով պառավի տեսքով, որը մուրացկանություն է անում փողոցում, կամ ողբում է իր դժվարին կացության համար, ահա այս ամենը ավելի է խորացնում բացասական կարծրատիպերը: Հազվադեպ է լինում, երբ տարեցներին ներկայացնում են, որպես ընտանիքի և թոռների մասին հոգ տանող, գիտուն, փորձված մարդիկ, որոնք համակրանք են առաջացնում և պայքարում են

իրենց իրավունքների համար: Մեծ մասամբ նրանք հանգամանքների պասիվ զոհեր են:

Թեպետ լրատվատվամիջոցները միայն բացասական կարծրատիպերի խորացմամբ չէ, որ ամրապնդում են տարեցների հետ կապված տհաճ տպավորությունը, այլ նաև նրանով, որ սակավ ուշադրություն են դարձնում այդ թեմային:

Մեր հասարակության մեջ տարեցների և ծերության նկատմամբ վերաբերմունքը փոխելու նպատակով պետք է հրաժարվել այն մոտեցումից, որով լրատվամիջոցները արտացոլում են այդ թեման: Բացասական կարծրատիպերը իրենց տեղը պետք է զիջեն իրատեսական դիմանկարներին, որպեսզի լսարանին ցույց տանք ծերության տարբեր կողմերը, առանց որևէ որակական գնահատականի:

Ահա մի քանի խորհուրդ, ծերության բազմակողմանի պատկեր ստեղծելու համար

♦ Մեր պատկերացումները ձևակերպելիս և հասարակության մեջ գոյություն ունեցող կարծիքները լուսաբանելիս, լեզուն կարող է հզոր զենք դառնալ, ինչը հասարակության մեջ ինտեգրվելու և գործընթացներին մասնակցելու գործում, հնարավոր է, պատնեշներ ստեղծի բոլոր տարիքի մարդկանց համար: Այդ պատճառով էլ հարկ է մտածել, որքանով ընդունելի են այնպիսի բառերն, ինչպիսիք են՝ ծեր, տարեց, ծերություն: Եթե անմիջապես եղելությունը փոխանցելու համար անհրաժեշտ չէ, ապա լավ կլինի ընդհանրապես չգործածել այդ բառերը: Ընտրենք այնպիսի բառապաշար, որը կօգնի մեզ տարիքի օբյեկտիվ, բազմերանգ և ճշգրիտ պատկեր ստեղծելու գործում:

♦ Տարեց մարդիկ պատկանում են լիովին տարբերվող խմբերին, նրանց թվում կան կանայք և տղամարդիկ, հարուստներ և աղքատներ, խելամիտներ և անընդունակներ, ֆիզիկապես ակտիվներ և հաշմանդամներ, կրթվածներ և անգրագետներ, բանվորներ, արվեստագետներ, բժիշկներ և այլն: Լրագրողը պարտավոր է պարզել, թե ինչ գործունեություն են վարում այդ մարդիկ և ինչ խոչընդոտների են

հանդիպում: Զրուցենք, հարցնենք թե ինչ դժվարություններ ունեն և միայն այդպես կկարողանանք ստեղծել այն կատարյալ դիմանկարը, որին արժանի են այս մարդիկ:

♦ Տարեց մարդկանց ֆինանսական հոգսը, անշուշտ, կարևոր է, սակայն դա միակ թեման չէ, որի շուրջ հարկավոր է պատրաստել ռեպորտաժ. Նրանցից շատերը զբաղվում են որոշ գործունեությամբ. Նրանք օգնում են ընտանիքին, հոգս են տանում թոռների կամ հարևանի երեխաների մասին, այս կամ այն ձևով ներդնում են իրենց ավանդը հասարակության բարեկեցության գործում, այցելում են թատրոններ և կինոթատրոններ, կարդում են լրագրեր ու գրքեր և գրեթե միշտ հետևում են մամուլում լուսաբանվող նորություններին: Տարեց մարդիկ, որպես օրենք, ունեն կյանքի մեծ փորձ և մամուլում նրանց ներկայացնելը կտա ավանդական կարծրատիպերից խույս տալու հնարավորություն:

ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻՆ՝ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՄ

Պետք է գիտակցենք լրագրողի ռեպորտաժի ու այդ ռեպոտրտաժի յուրաձևության ազդեցությունը անհատների և տարբեր սոցիալական խմբերի վրա:

- Ամրապնդենք և պարբերաբար կապ պահպանենք հասարակության տարբեր խմբերի ներկայացուցիչների հետ:
- Գիտակցենք մեր՝ որպես նրանց միջև փոխըմբռնումն ամրապնդող առաքելության դերը: Ընդ որում, դա հնարավոր կդառնա վերացնելով այն պատնեշները, որոնք գոյություն ունեն ամենօրյա հաղորդակցության մեջ, կամ վերականգնելով ամբողջությամբ ընդհատված հաղորդակցությունը: Լրագրողի դերը բավականին ավելի մեծ է, քան ուղղակի նորություններ հաղորդողինը:
- Հասարակական բազմազանության լուսաբանումը չի սահմանափակվում այս հասարակության մեջ տեղի ունեցած իրադարձությունները արտացոլելով: Գլոբալացումն ու տարբեր երկրների քաղաքացիների միջև աճող հաղորդակցությունը էլ ավելի ամրապնդեց լրատվամիջոցներում բազմազանության լուսաբանման նշանակությունը: Հնարավոր է մի երկրում տեղի ունեցած իրադարձությունները լուրջ հետևանք ունենան այլ երկրում: Այսպիսով, մի երկրի հիմնախնդիրը կարող է դառնալ մեկ այլ երկրի կամ ժողովրդի հիմնախնդիր:
- Երբ հարկ է լինում լուսաբանել հասարակական բազմազանության հետ կապված թեման, ուշիուշով պետք է զննենք, թե որ տեսանկյունից է ավելի ճիշտ ներկայացնել այն: Եթե նման սյուժե ենք պատրաստելու, ապա անպայման պետք է իմաստավորենք անցյալի փորձը և կշռադատենք բոլոր հնարավոր տարբերակները:
- Լրագրողներից շատերը ունեն այն փաստերի սեփական բացատրությունը, որոնց մասին պատմում են լսարանին

և հնարավոր է, այդ սեփական կարծիքը դարձնեն նաև «եղելության մի մաս»: Անհրաժեշտ է հիշել, որ եթե հնարավոր է խույս տալ, ապա ոչ մի դեպքում չպետք չէ ներկայացնել հասարակական բազմազանությունը, որպես բացասական:

- Փորձենք հաշվի առնել ուրիշի կարծիքը:
- Անընդհատ ստուգենք փաստերը, հատկապես այն դեպքում, երբ գործ ունենք տեղեկատվության անվստահելի աղբյուրների կամ այնպիսի իրադարձությունների հետ, որոնք հնարավոր է, դառնան ճգնաժամի նախապայման:
- Անհրաժեշտ է նաև, նախապես հաշվարկել մեր ռեպորտաժի հնարավոր արդյունքներն ու լսարանի ռեակցիան: Դրա համար պետք է լավ ծանոթ լինել այն համատեքստին, ուր ընթանում են իրադարձությունները, որոնել բավարար տեղեկատվություն հիմնախնդրի պատմության և ապագայում իրավիճակի հնարավոր փոփոխման վերաբերյալ:
- Հնարավորինս չափ խուսափենք խմբերը ընդհանրացնելուց: Երբ լուսաբանում ենք անհատներին և նրանց գործողությունները, անկախ նրանից դրական են դրանք, թե բացասական, պետք է քննարկենք դրանք, ոչ թե որպես ամբողջ խմբին բնորոշ, այլ որպես անհատական հարց:
- Պրոֆեսիոնալ ժուռնալիստիկան լրագրողից անընդհատ պահանջում է բարելավել «միջնորդի» ֆունկցիայի մասնագիտական ունակությունները, որը նա իրականացնում է մարդկանց և այն իրականության միջև, ուր մենք ապրում ենք:

ԱՅՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀԱՐՑԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ, ՈՐՈՆՔ ՊԵՏՔ Է ՀԻՇԻ ԼՐԱԳՐՈՂԸ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ՇՈՒՐՋ ՌԵՊՈՐՏԱԺ ՊԱՏՐԱՍՏԵԼԻՍ

- Ընդգրկված են արդյո՞ք իմ ռեպորտաժում բոլոր՝ և՛ դրական, և՛ բացասական կետերը:
- Գիտակցում եմ արդյո՞ք լսարանի վրա գործած իմ ռեպորտաժի ազդեցությունը: Չեմ խորացնում արդյո՞ք արդեն գոյություն ունեցող կարծրատիպերը: Հարցազրույցի ժամանակ փորձում եմ արդյո՞ք փնտրել գլխավոր սյուժեից անկախ, բազմազան հեռանկարներ:
- Բնութագրում եմ արդյո՞ք մարդկանց ադեկվատ և ընդունելի բառերով, միաժամանակ, հարգանքով եմ վերաբերվում արդյո՞ք իմ խմբագրի գրասենյակին և իմ մասնագիտության էթիկական չափորոշիչներին:
- Պարբերաբար լայնացնում եմ արդյո՞ք իմ կողմից հարցվածների շրջանակը:
- Անում եմ արդյո՞ք դատողություններ գոյություն ունեցող տարբերակվածությունների շուրջ և հարցնում եմ արդյո՞ք կոլեգաների և խմբագիրների կարծիքը կապված սրա հետ:
- Ուսումնասիրում եմ արդյո՞ք տարբերվող խմբերը, կարծրատիպերից խույս տալու նպատակով:
- Գիտակցում եմ արդյո՞ք խմբերում գործող գաղտնի օրակարգերն և ստորաբաժանումը, որպեսզի ակամա չընկնեմ որևէ ուժի ազդեցության տակ:
- Համաձայնվում եմ արդյո՞ք կոլեգաների հետ, երբ կասկածի տակ եմ առնում իմ ռեպորտաժի շեշտադրումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Castañeda, Laura; Campbell, Shannon B: News and Sexuality: Media Portraits of Diversity; Sage (2006)

Getting the facts right: Reporting ethnicity and religion; Article 19; Retrieved 14 October, 2016 https://www.article19.org/resources.php/resource/3093/en/getting-the-facts-right:-reporting-ethnicity-and-religion

George, Cherian: Reporting diversity: media, social norms and public opinion; Retrieved 07 July 2017 http://www.mediaasia.info/reporting-diversity-media-social-norms-and-politics/

Glossary of hate speech in the media of Armenia and Azerbaijan, Baku-Yerevan 2008-2013; Retrieved 11 August, 2017 http://epfarmenia.am/wp-content/uploads/2014/06/glossary_eng-1.pdf

Hoewe, Jennifer e.al.: A Pedagogical Response to the Coverage of Islam: A Wiki-Based Best Practices Document for Reporting on Muslims and Islam, Retrieved 15 April 2016, http://www.muslimsubjects.org/journalislam/files/2010/09/AEJMC_Best_Practices.pdf

Journalism, media and the challenge of human rights reporting; International Council on Human Rights Policy (2002).

Kovach, B., Rosenstiel, T.: The Elements of Journalism. New York: Three Rivers Press (2007)

Mapping the global Muslim population. Pew Forum on Religion & Public Life. Pew Research Center (2009). Retrieved 15 April 2016 http://pewforum.org/docs/?DocID=450

Reporting Diversity: How journalists can contribute to community cohesion. Society of Editors & Media Trust. (n.d.) Retrieved 07 June 2017 www.societyofeditors.co.uk/userfiles/file/Reporting%20Diversity.pdf

Sarajlic, Eldar: Media and Diversity in Post-Conflict Countries - Retrieved 10 June 2017 http://www.annalindhfoundation.org/report/media-and-diversity-post-conflict-countries-eldar-sarajlic

Study on Homophobia, Transphobia and Discrimination on Grounds of Sexual Orientation and Gender Identity, Sociological Report: Georgia; The Danish Institute for Human Rights, Retrieved 16 July 2017 https://www.coe.int/t/Commissioner/Source/LGBT/GeorgiaSociological_E.pdf

Temenugova, Aleksandra, e. al: Guidelines on ethical Journalism and Quality reporting; Verein Freies Radio Wien (2015)

Troshanovski, Marko: Representation of Minorities in the New Media, Analysis of Professional Journalistic Standards in New Media Practices, Skopje (2016)

Tsereteli, Tamar: Nationalism and Representation of Gays and Lesbians in Post -Soviet Georgia: Retrieved 14 July 2017 http://minority.ge/wp-content/uploads/2010/12/Tsereteli-Tamar-nationalism-and-the-representation-of-gl-in-georgia.pdf

Triandafyllidou, Anna: Addressing Cultural, Ethnic & Religious Diversity Challenges in Europe. A Comparative Overview of 15 European Countries, Florence (2012)

Tuller, David: Reporting diversity Manual (Balkan) (2002)

White, Aidan: Ethical Journalism and Human Rights, Strasbourg (2011).

სტამბა დამანი
Print House Damani

თბილისი, პ. ჩანჩიბაძის ქუჩა 6
☎ 214 34 01, 577 33 38 57
stamba.damani@gmail.com
f სტამბა დამანი / Print House Damani

ISBN 978-9941-27-680-4

Friedrich Naumann
STIFTUNG FÜR DIE FREIHEIT

IDEM
The Institute for Democracy, Media and Cultural Exchange e.V.

Auswärtiges Amt

Freiheit.org
fnfsc.fnst.org